

ԳՐԱԲԱՐԵԱՆ ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Վազգէն Ռաֆայելի Ղազարեան

Յառաջաբան

Նախդիրը եւ նախադրութիւնն Հասկացութիւններն առաջին անգամ նկարագրուում են Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան»¹ (Τέχνη γραμματική) երկում, որն առաջին անգամ Համակարգուած քննութեան ենթարկելով մասնագիտական Հասկացութիւնները (այլ ոչ՝ երեւոյթները)՝ մեծ հռչակ եւ տարածում ստացաւ հին աշխարհում՝ թարգմանուելով բազմաթիւ լեզուների, ի թիւս որոնց՝ նաեւ Հայերէնի՝ դառնալով Հայ քերականագիտութեան՝ որպէս գիտակարգի սկզբնաւորման հիմքը²: Թրակացին յունարէնի Համար ընդունում է 8 խօսքի մաս, այդ թւում՝ նախդիրը (եւ նախադրութիւնը), որոնք ներառուում են չթեքուող (անխաղաց) խօսքի մասերի կազմում: Այս բաժանումը միջնադարում շարունակել են նաեւ նրա երկի Հայ թարգմանիչներն ու մեկնիչները, սակայն յետագայ դարերում նախդիր, նախադրութիւն եւ նախածանց Հասկացութիւնները հետզհետէ յստակեցուել են, որոշակիացուել է Հայերէնի բնիկ եւ օտարածին տարրերի կազմը, ճշտուել է բուն նախդիրների թուաքանակը, վերհանուել են ոսկեդարեան Հայերէնում նախդիրների եւ նախադրութիւնների իմաստային կողմերը եւ դրանց գործածութեան առանձնայատկութիւնները, որոնք դասաւորուել են ըստ իմաստի, ըստ խնդրառու-

թեան, ըստ հոլովակերտ սկզբունքի³, ըստ ծագման⁴, ըստ շարահիւսական կիրառութեան⁵ եւ այլն: Նախդիրը եւ նախադրութիւնն Հասկացութիւնների տարբերութիւնների վերհանման ու մեկնաբանման գործում մեծ ներդրում ունի Գ. Թոսունեանը, որն իր աշխատանքներում⁶ ճշգրտել է նախդիրը եւ նախադրութիւնն Հասկացութիւնների տարբերութիւնները՝ նախդիրը սահմանելով իբրեւ բառական իմաստից զուրկ, հոլովակերտ, պարագայական եւ խնդրային յարաբերութիւններ արտայայտող նախադաս կիրառութեամբ միավանկ արմատական ձեւոյթ, իսկ նախադրութիւնը՝ բառական արժէքն ու անկախութիւնը պահպանած, նախադաս եւ ետադաս կիրառութեամբ հիմնականում բազմավանկ, բաղադրեալ, գերազանցապէս պարագայական յարաբերութիւններ արտայայտող բառ՝ ծագած գոյականից, ածականից եւ մակբայից⁷: Գրաբարում եւ միջին Հայերէնում նախդիրների գործածութեան վերաբերեալ վերջին Համակողմանի ուսումնասիրութիւնները պատկանում են Գ. Մանուկեանի գրչին⁸:

1 Gustav Uhlig (ed.), *Dionysii Thracis Ars grammatica qualem exemplaria*, Leipzig, 1883:
2 Ադոնց Ն., *Արուեստ Դիոնիսիոս քերականի եւ հայ մեկնութիւնը նորիւ*, - Երկեր, հտ. 3, Երևան, 2008; Адонц Н., *Дионисий Фракийский и армянские толкователи*. Bibliotheca Armeno-Georgica. IV. Петроград, 1915:

3 Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի, *Հայերէն քերականութիւնն ի պետս զարգացելոց*, Վեներտիկ, 1852, էջ 119:
4 Հ. Վրթանէս Չալիխեան (աշխ. Հ. Արսէն Այտընեան), *Քերականութիւնն հայկազնեան լեզուի*, Վիեննա, 1885, էջ 119:
5 Մալխասեանց Ս., *Գրաբարի հոլովումը, խոնարհումը եւ նախդիրները*, Թիֆլիս, 1891
6 Թոսունյան Գ., *Գրաբարի նախադրությունները (V-XI դդ.)*, - Լեզվի եւ ոճի հարցեր, հտ. 7, Երևան, 1983, էջ 5-115:
7 Նոյն տեղում, էջ 24-25:
8 Մանուկյան Գ., *Նախդրագործությունը 5-10 դարերի եւ միջինհայերենյան հայոց չափածոյում*, Երևան, 2005:

Նախդիրներն ու նախադրուծիչներն էլ, որոնք տարբեր լեզուներում գործածվում են զանազան տարածական ու ժամանակային յարաբերութիւնների արտայայտման համար եւ ստանձնում շարահիւսական պաշտօններ տարբեր, ընդհանուր առմամբ միաւորում են մեկ խօսքի մասում, որն անուանում է մերձդիր (*adposition*, ընդհանուր եզրոյթ, որը միաւորում է նախդիր, նախադրուծիչ, ետադրուծիչ, միջադրուծիչ, շրջադրուծիչ եւ այլ հասկացութիւնները⁹):

Մերձդիրները սովորաբար գուգորդում են գոյականի կամ դերանունան հետ եւ ընդհանուր առմամբ կիրառում անունական բառակապակցութիւններում, որի նախդրառու անդամը յաճախ կոչում են նախդիր խնդիր¹⁰: Վերջինս իր մերձդիր հետ միասին կազմում է մեկ անդամ (ինչպէս արդի հայերէնի կապերը), որը նախադասութեան մէջ իր հերթին հանդէս է գալիս որպէս ստորոգեալի լրացում՝ խնդիր կամ պարագայ՝ ստանձնելով նաեւ հոլովակերտ, մակբայական եւ ածանցական զանազան գործառոյթներ:

Մերձդիրը կարող է լինել նախադաս (նախդիր եւ նախադրուծիչ), ետադաս (ետադրուծիչ), միջադաս (միջադրուծիչ), կարող է շրջապատել լրացումը երկու կողմից (շրջադրուծիչ) եւ այլն: Հին հայերէնում բուն նախդիրները գերազանցապէս նախադաս են (հագուադէպ՝ միջադաս), իսկ «նախադրուծիչ» ընդհանուր եզրոյթով բնորոշուող սպասարկու բառերը՝ ե՛լ նախադաս, ե՛լ ետադաս:

Նախդիրների եւ նախադրուծիչների կիրառութիւնը գալիս է դեռեւս հնդեւրոպական նախալեզուից, որում դրանք գոր-

ծածուել են գերազանցապէս մակբայական նշանակութեամբ¹¹: Հնդեւրոպական լեզուի քայքայումից յետոյ բոլոր այդ ձեւերը դուստր լեզուներում ենթարկում են զանազան փոփոխութիւնների, մի մասում՝ անհետանում, իսկ միւսում՝ մասնակիորէն ենթարկում քերականացման¹², ինչի արդիւնքում շատերի բառային անկախ գործածութիւնը վերանում է: Հին հայերէնը, կորցնելով հնդեւրոպական հոլովական վերջաւորութիւնների մեծ մասը¹³, այս բացը լրացնելու համար զարգացնում է քերականական նոր միջոցների համակարգ՝ մեծապէս ընդլայնելով նախդիրների եւ նախադրուծիչների դերը, որոնք ոչ միայն հարստացնում են հոլովական համակարգի թելադրած իմաստները, այլեւ կազմում նոր եւ առանձին հոլովներ: Մեյի, Աճառեանի, Զահուկեանի եւ Թումանեանի՝ լեզուի հնագոյն վիճակի վերականգնմանը նուիրուած աշխատութիւններում շեշտում է այդ մասնիկների թէ՛ նախդրային, թէ՛ նախածանցական գործառոյթը բառակազմութեան եւ շարահիւսութեան մէջ: Հայերէնի նախադրային շրջանում հնդեւրոպական ծագման նախդիրներին եւ նախադրուծիչներին գուգահեռ տարածում են նաեւ գերազանցապէս իրանական լեզուներից փոխառուած մերձդիրներ, ինչպիսիք են աղազաւ, զարէն, ընդդէմ, հանդէպ, հանդերձ, հիազ, շուրջ, պէս, սակս, վասն եւ այլն:

Դասական հայերէնում վկայուած է 6 ճշմարիտ նախդիր՝ առ, գ, ընդ, ըստ, ի (ձայ-

9 Martin Haspelmath, *Adpositions*. International Encyclopedia of Linguistics, Oxford University Press, New York, 2003:

10 Չամչեանց Մ., *Քերականութիւն Հայկազեան լեզուի*, 1779, էջ 118:

11 Václav Blažek, *Indo-European Prepositions and Related Words*, Sborník prací filozofické fakulty brněnské univerzity, A44, 2001, էջ 15-43; George E. Dunkel, *Lexikon der indogermanischen Partikeln und Pronominalstämme*, Carl Winter Universitätsverlag, 2014:

12 Nigel Vincent, *The evolution of c-structure: Prepositions and PPs from Indo-European to Romance*. Linguistics, 37. 1999:

13 Туманян Э.Г. *Древнеармянский язык*, Москва, 1971, էջ 416:

նաւորից առաջ՝ յ) եւ ց, որոնք բոլորն ունեն բնիկ ծագում եւ, ըստ մատենագրական տուեալների, զուգակցւում են բոլոր

հոլովների հետ՝ բացի ուղղականից: Տարբեր հոլովներով նախդիրների կիրառութեան աղիւսակը տրւում է ստորեւ¹⁴:

Նախդիր	Հոլով				
	հայցական	սեռական	տրական	բացառական	գործիական
առ	+		+	+	+
զ-	+		+	+	+
ընդ	+	+	+	+	+
ըստ	+		+	+	
ի (յ-)	+		+	+	
ց-	+				

Սրանք գերազանցապէս զուգորդւում են գոյականների եւ դերանունների հետ, իսկ բայերի հետ դրանց կիրառութիւնը առանձնակի տարածում չի ստացել: Աւելին, հիմքեր կան ենթադրելու, որ մի շարք նախածանցաւոր բայեր իրականում ծագել են բառակապակցութիւններից¹⁵, ինչպէս գետնեմ = զգետնի գարկանեմ, առանձնեմ = առանձին ունիմ եւ այլն: Ուստի, միշտ չէ, որ հնարաւոր է զանազանել նախդրի՝ բայածանցական թէ՛ շարահիւսական դերը տուեալ բառաձեւի ծագման հարցում:

Հարցադրումը

Դասական հայերէնի մինչ օրս լոյս տեսած լաւագոյն քերականութիւնները, լինեն գործնական, տեսական թէ՛ համաժամանակեայ-նկարագրական բնոյթի, գրաբարի լեզուակիրառութեան իւրայատուկ կողմերի ներկայացման հարցում դրսեւորում են ոչ միայն անորոշութիւններ, վերածածկումներ, այլեւ պարզապէս «անտես եւ ապախտ եղեալ»¹⁶ փաստական սխալ-

ներ, որոնք ցաւալիօրէն կրկնւում են մի ձեռնարկից միւսը՝ առանց պատշաճ ուսումնասիրութեան: Սրա պատճառները գնահատելիս մենք յանգել ենք այն համոզմանը, որ տուեալ երեւոյթի հիմքում երկու էական հանգամանք կայ:

Առաջինն ընդհանուր է եւ բացատրւում է գրաբարի ուսումնասիրութեան ասպարէզում դարէր շարունակ գերիշխող թարգմանական մտայնութեամբ, որը լեզուի հետազոտութիւնն ու դասականութեանը յանգեցնում է գրաբարեան տեքստերի ընկալման եւ թարգմանութեան գործը դիւրացնելուն եւ մերօրեայ ուսումնասիրողին հայոց պատմական գանձարանի հետ փոքրիշատէ ծանօթացնելուն: Այս մտայնութիւնն առանձնակի ցայտուն է աշխարհաբարի վերջնական յաղթանակի արդիւնքում ձեւաւորուած գրաբարամերժ մօտեցման հաստատումից ի վեր լոյս տեսած գրեթէ բոլոր դասագրքերում եւ ձեռնարկներում՝ չնչին բացառութիւններով: Գրաբարի խոշորագոյն մասնագէտներից մեկի՝ «Դասական հայերէնի նկարագրական քերականութիւն»¹⁷ կոթողային աշխատութեան հեղինակ Մարտիրոս Մինասեանի

14 Martiros Minassian, *Emplois des Prépositions en Arménien Classique*, Venise-St. Lazare, 1981, էջ 8:

15 Туманян Э.Г. *Древнеармянский язык*, էջ 126:

16 Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի, *Հայերէն քերականութիւն*, էջ v:

17 Մինասեան Մ., *Դասական հայերէնի նկարագրական քերականութիւն*, Ժնև, 1996:

խօսքերով՝ «Գրաբարի ապարդիւն կամ քիչ արդիւնակէտ դասաւանդման պատճառներէն մէկը, ուսուցման թերի եղանակէն բացի, օգտագործուած դասագրքերն են: Ասոնք սովորաբար կը բացուին այբուբենով, կը շարունակին հոլովումներու եւ խոնարհումներու ամբողջական յարացոյցներով եւ շարահիւսութեան կանոններով: Շատ քիչ բացառութեամբ, չունին քերականական դասին յաջորդող եւ զայն ամրապնդող համապատասխան վարժութիւններ կամ գրաբարէ աշխարհաբար թարգմանութեան անջատ եւ ընտրուած նախադասութիւններ, որոնք արտացոլեն միայն տուեալ եւ նախորդ դասերուն մէջ աշակերտին սորուած քերականական նիւթը»¹⁸:

Ցաւալիօրէն, Մինասեանը եւս տուրք է տալիս գրաբար լեզուի հնարաւորինս լիակատար ուսուցանման անհնարինութեան այս հոգեվիճակին՝ շեշտելով, որ «այսօր գրաբարի ուսուցման նպատակն է մանրամասն հասկնալ գրաբար հատուած մը կամ գիրք մը: Աշխարհաբարէ գրաբար թարգմանութիւններն այլեւս աննպատակ են, քանի որ աշակերտութիւնը գրաբարով գրելու չի պատրաստուիր, ինչպէս երբեմն էր»¹⁹: Դասագրքերի թերութեան պատճառը, թերեւս, իր իսկ նշած հանգամանքների շարքն է, ըստ որոնց՝ «Հինգերորդ դարի առաջին կէսի գրաբարի կամ դասական հայերէնի նկարագրական քերականութիւնը խստապահանջօրէն վստահելի լինելու համար պէտք է աշխատասիրուէր աշխատանքային անհրաժեշտ «գործիքների» առկայութեան պայմաններում: Արդարեւ, դասական հայերէնով թարգմանուած կամ գրուած եւ Ե-Ը դդ. ընդօրինակուած ոչ մի երկի ձեռագիր չի պահպանուել, իսկ հետագայ դարերից հասածները ... բազմապիսի եւ անհամար աղաւաղումներ եւ տարբե-

րակներ ունեն, ուր խառն են դասականն ու ետդասականը, որ յաճախ անհնար է վստահօրէն տարբերել: ... Դասական հայերէնի ողջ մատենագրութեան բառարանի եւ համաբարբառների գոյութեան անհրաժեշտութիւնից բացի՝ դասական հայերէնի նկարագրական վստահելի լիակատար քերականութիւնը պէտք է լոյս ընծայուէր ամբողջ դասական գրականութեան քննական հրատարակութեան հիման վրայ: Բայց քանի որ նշուած նախապայմանները գոնէ մօտիկ ապագայում երբեք իրականութիւն չեն դառնայ, ուստի զուր է այդ երեւակայական երջանիկ օրուան սպասել»²⁰:

Անօրինակ բծախնդրութեամբ աչքի ընկնող հեղինակի դէպքում սա, անշուշտ, հասկանալի մօտեցում է, սակայն մեզ ցաւալի եւ աններելի է թւում, որ հայաստանեան գրաբարագիտութեան հարիւրամեայ գոյութեան ընթացքում մինչ օրս չի ստեղծուել գրաբարի՝ որպէս առանձին եւ ինքնուրույն լեզուի անկախ ուսուցանման համար պիտանի լիակատար քերականութիւն, որի հիմնական խնդիրը կը լինէր ոչ թէ գրաբարեան այսինչ կամ այնինչ իրողութեան աշխարհաբար թարգմանութիւնը (յաճախ անհարկի «ճշգրտումներով»), որոնք առառաւել խճողում են գրաբարեան լեզուամտածողութեան ընկալումը՝ շարահիւսական համանիշների ընդարձակ շարքերի ներկայացմամբ), այլ հակառակը՝ հետաքրքրողի մօտ կը ձեւաւորէր հին հայերէնով միտքը ճիշտ կազմելու եւ խօսքի մակարդակում արտայայտելու մշակոյթ՝ իր զանազան գործիքներով, ինչպէս դա առհասարակ արւում է դասական թէ ժամանակակից որեւէ լեզու տարրական մակարդակից սովորեցնել սկսող դասագրքերում, որպիսին էր Չամչեանի, Չալըխեան-Այտընեանի, Գարագաշեանի, Բագրատունու առմիշտ արդիական ձեռնարկների նպատակը, ուր

18 Մինասեան Մ., Գրաբարի գործնական դասընթաց, Անթիլիաս, 1976, էջ 5:
 19 Նոյն տեղում, էջ 6:

20 Մինասեան Մ., Դասական հայերէնի նկարագրական քերականութիւն, էջ 3:

հեղինակները ջանում էին «առաւել զլեզուն ուսուցանել ըստ կարի չափ եւեթ, եւ ոչ զքերականականն գիտութիւն»²¹:

Այս բացը լրացնելու ուղղութեամբ վերջին տարիներին արուած քայլերից առանձնապէս կարեւոր է նշել Վիեննայի Մխիթարեան միաբանութեան վանահայր, «Հանդէս ամսօրեայ» պարբերականի խմբագիր Հայր Պօղոս Գոճանեանի «Դասական գրաբարի գործնական քերականութիւն» ձեռնարկը²², որում հեղինակն ամենայն բծախնդրութեամբ փորձում է ընթերցողին մերձեցնել ոսկեդարեան հայերէնի մտածողութեան առանձնայատկութիւններին՝ ձգտելով ձեւաւորել գրաբարի լեզուազգացողութիւն:

Երկրորդ պատճառը մեր կարծիքով պայմանաւորուած է արդի հայերէնում գրաբարեան մի շարք իրողութիւնների եւ, մասնաւորապէս, նախդիրների՝ որպէս խօսքի մասի, բացակայութեամբ: Ինչպէս նշում է Մինասեանը, «Գրաբարի մէջ շատ գործածական են նախդիրները՝ առ, գ, ընդ, ըստ, ի կամ յ, ց, որոնք դարձուածքներէ դուրս չեն գործածուելի աշխարհաբարին մէջ եւ մեծ դժուարութիւններ կը ներկայացնեն գրաբար սորվողին»²³: Չալըխեանը շեշտում է նաեւ հարցի միւս կողմը. «Ընդհանրապէս նախդիրներուն գործածութեան այլեւայլ կերպերը, այս ինքն են՝ տեղափոխութիւն, կրկնում եւ աւելադրութիւն, զեղչում, եւ այլն. շատ ազատութիւններ ունին գրաբարի մէջ. որոնց մի առ մի բացատրութիւնն ու վարդապետութիւնը շատ երկար է եւ մանրամասն, եւ միանգամայն անհաստատ: Ուստի մինչեւ հոս այլեւայլ տեղեր աւանդուած կանոններուն մնացոր-

ը՝ վայելուչ գրուածոց ուշադիր ընթերցմամբ միայն կրնայ լրանալ»²⁴:

Ըստ այդմ, գրաբարեան նախդիրների մեկնաբանութիւնները յաճախ յանգեցուած են արդի հայերէնում (կամ որեւէ այլ լեզուում) գործածական եւ սովորական կառոյցների, որոնք թէեւ պիտանի են թարգմանութեան եւ իմաստի քիչ թէ շատ հասկանալի ընկալման համար, սակայն մնում են սոսկ թարգմանութեան եղանակներ եւ ոչ միշտ են ընձեռում լեզուամտածողութեան առանձնայատկութիւններն ընկալելու եւ դրանք մեքենայօրէն սերտելուց խուսափելու դուռը բացող բանալին: Աւելի բարունք են արեւմտեան հայագիտական կենտրոններում լոյս տեսած քերականութիւնները (որոնց թւում՝ նաեւ եւրոպական լեզուներով), որտեղ հայերէնի նախդիրները համեմատուած են այլուրեք գործածական նախդիրների հետ՝ հնարաւորութիւն տալով աւելի հարազատօրէն մեկնաբանելու դրանց զանազան իմաստները²⁵:

Այս առմամբ վնասակար եւ խոտելի ենք համարում բազմաթիւ ձեռնարկներում կրկնուող միտքը, թէ նախդիրները, ի տարբերութիւն նախադրութիւնների, չունեն առանձին իմաստ եւ այդպիսին ձեռք են բերում միայն որոշակի հոլովներով զուգակցուելու արդիւնքում: Այսպէս, Ա. Աբրահամեանը գրում է. «Նրանց [նախդիրների - Վ.Ղ.] բառական արժեքը շատ աղոտ է, նրանց մեջ գերիշխում է քերականական արժեքը, այն էլ, ինչպէս նշեցինք, արտահայտվելով կապակցութիւնների մեջ»²⁶: Նոյնն է կրկնում նաեւ Վ. Առաքելեանը. «Նախդիրներն, իբրեւ բառական

21 Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի, Հայերէն քերականութիւն, էջ vi:

22 Հ. Պօղոս Գոճանեան, Դասական գրաբարի գործնական քերականութիւն, Վիեննա-Երեւան, 2011:

23 Մինասեան Մ., Գրաբարի գործնական դասընթաց, էջ 14:

24 Հ. Վրթանէս Չալըխեան, Քերականութիւն հայկազնեան լեզուի, էջ 452:

25 Godel R., An Introduction to the Study of Classical Armenian, Wiesbaden, 1975; Martiros Minassian, Emploi des Prépositions en Arménien Classique, Venise - St. Lazare, 1981:

26 Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, 4-րդ փրատ., Երեւան, 1976, էջ 228:

միաւորներ, ինքնուրոյն նշանակութիւն չունեն. սրանք նշանակութիւն են ստանում միայն որեւէ հոլովով (բացի ուղղականից) գործածուող բառի հետ կիրառուելով, կորցրել են իրենց սեփական բառական նշանակութիւնը եւ ստացել հոլովական վերջաւորութեան արժէք»²⁷: Շարքը կարելի է շարունակել: Այնինչ, այսօրինակ տեսակէտը, մեր կարծիքով, մեծամասամբ անհիմն է եւ խառնաշփոթ է մտցնում անկախ բառային իմաստի եւ ընդհանուր բառային իմաստի միջեւ: Ի հաստատումն, բերենք Ռ. Գոդելի կարծիքը, որի համաձայն՝ «The actual blending of a preposition with a case form is ascertainable in the interrogative pronoun NAcc., *zi, zinch* ‘what?’... In any other instance, the prepositions, however frequently joined to the Acc. (*z-*) or to the L. and Abl. (*i/y-*), never come down to mere ‘case prefixes’, but stand on a level with other prepositions that occur with the same cases»²⁸ («Հոլովաձեւի հետ նախդրի փաստացի միաձուլում վկայուած է ուղղահայց. զի՞, զի՞նչ հարցական դերանունան դէպքում:... Մնացեալ որեւէ դէպքում, սակայն, նախդիրները, յաճախ կցուելով հանդերձ հայցականին (*զ-*) կամ ներգոյականին ու բացառականին (*ի/յ-*), երբեք չեն վերածուում զուտ «հոլովական նախամասնիկի», այլ մնում են սոյն հոլովների հետ հանդիպող միւս նախդիրների հետ միեւնոյն մակարդակում»): Նոյնպիսի եզրակացութեան է յանգում նաեւ Գ. Մանուկեանը՝ գրելով. «Նախդիրները... նախդրակիր բառի հետ դառնում են նախադասութեան անդամ այնպես, ինչպես ժամանակակից հայոց լեզվի կապերը: ... 3-ը (*զ, ի(յ), ց*) գրեթէ ամբողջովին կորցրել են իրենց բառային իմաստը, քան առ, ընդ, ըստ նախդիրները» եւ եզրակացնելով. «... նախդրա-

յին կիրառութեանն ենթարկւած նրանք արդեն ոչ թէ «բառիկներ» են, կամ «բառ-մասնիկներ», այլ՝ ամբողջական, սպասարկու բառեր»²⁹: Նախդիրների բառային եւ քերականական արժէքների փոխարարբերութեան հարցը հետաքրքրել է նաեւ ռուս լեզուաբաններին, որոնցից ոմանք (Պեչկովսկի, Շչերբայ) նախդիրները համարում են ինքնուրոյն բառիմաստից զուրկ եւ միայն քերականական իմաստով օժտուած սպասարկու բառեր, սակայն լեզուաբանների մեծամասնութիւնը, այնուամենայնիւ, ընդունում է նախդիրներում ինքնուրոյն եւ քերականական բառիմաստների զուգահեռ գոյութիւնը (Վինոգրադով):

Իբրեւ թէ մթազնած բառական արժէքի մասին տեսակէտի առաջքաշումը բացասական դեր ունի գրաբարի ուսումնասիրութեան գործում, քանի որ գորդեան հանգոյցի պէս խճողում, կասեցնում եւ թոյլ չի տալիս ձեռնամուխ լինել այն հիմնական յատկանիշների վերհանմանը եւ ուրուագծմանը, որով նախդիրները խնդրային եւ պարագայական տարաբնոյթ իմաստներ են հաղորդում դրանցով կառավարուող հոլովներին: Աւելին, դժուարանում է դեռեւս հնագոյն հայերէնում նախաբայերի վերածուած նախդիրների՝ բայերին հաղորդած նրբերանգների իմաստաւորումը եւ համակարգումը, երբ այդպիսիք ի սկզբանէ համարում են «ինքնուրոյն նշանակութիւն» չունեցող բառական միաւորներ՝ անտեսելով այն հանգամանքը, որ նմանօրինակ կազմութիւններ ստեղծուել են նաեւ հինգերորդ դարում եւ յետոյ³⁰: Իբրեւ օրինակ, նշենք Վ. Քոսեանի «Գրաբարի բառակապակցութեանները» աշխատութիւնը, որում հեղինակը թէեւ նշում է նախդիրների որոշակի իմաստների առկայութիւնը, չի փորձում ըստ էութեան

27 Առաքելեան Վ., Գրաբարի քերականութիւն, Երևան, 2010, էջ 197:

28 Godel R., *An Introduction to the Study of Classical Armenian*, Wiesbaden, 1975, էջ 27:

29 Մանուկեան Գ., *Նախդրագործածությունը*, էջ 3:

30 Հովսեփեան Լ., *Գրաբարի բառակապակցությունը*, Երևան, 1987, էջ 161:

սահմանել ասուածը եւ բազմաթիւ դէպքերում նախդիրների կիրառութիւնը յանրաւի համարում է նոյնիմաստ՝ գրելով. «Նախդիրների իմաստները շատ ընդհանուր են, երբեմն ոչ հստակորեն տարբերակված: Այս հանգամանքն է պատճառը, որ հնարավոր է դառնում նախդիրների գործածութիւնը մեկը մյուսի փոխարեն: Այսպես, նույն իմաստով կարող են գործածվել ի եւ ընդ, ի եւ առ, ի եւ ց, առ եւ ընդ նախդիրները»³¹: Ինչպէս պիտի փորձենք ցոյց տալ սոյն ակնարկում, սա անթոյլատրելի մօտեցում է ոչ միայն բուն գրաբարին, այլեւ՝ որպէս ուսումնական մեթոդ, առաւել եւս, երբ նախդիրների «բազմազան իմաստների» ուսուցանումը գրաբարի ամենից վատ իւրացուող կողմերից մէկն է:

Ընդհակառակը՝ գրաբարեան տեքստի նրբերանգների հասկացման համար հարկաւոր է հնարաւորինս ուրուագծել ու սահմանազատել նախդիրների ընդհանուր բառային արժէքը, դրանց ինքնուրոյն եւ երկրորդային իմաստները, որոնք, անկասկած, գոյութիւն ունեն կողք-կողքի, իսկ դրանց թարգմանութեան ձեւերն առաջարկելիս առաջնորդուել նրանց հիմնական իմաստին հնարաւորինս մօտ բառային միաւորներով, այլ ոչ՝ շարահիւսական համանիշներով, ինչպէս, օրինակ, վարւում է Վ. Առաքելեանը՝ գրելով. «առ նախդիրը տրական խնդրով արտայայտում է՝ ... դ) շարժում ցոյց տուող բառերի մօտ դէպի կապի նշանակութիւնը. «Գնաց առ ծովուս Գեղամայ» (Խոր., 315)»³², երբ տուեալ նախադասութեան մէջ միանգամայն ուղղակիօրէն վկայուած է առ նախդրի բուն մատ իմաստը: Օրինակները մեծաթիւ են:

Միով բանիւ, կարելի է պնդել, որ մինչ օրս հրապարակում չկայ գրաբարեան

նախդիրների գործածութեան ընդհանրացուած սխեմատիկ-տեսական նկարագրութիւն ըստ իմաստային խմբերի: Մասնագէտները դրանց կիրառութիւնները հիմնականում նկարագրում են ըստ հոլովների բաշխուածութեամբ՝ յաճախ չգիտակցելով, չտարբերակելով կամ միայն մօտաւորապէս շարադրելով նշանակուող նրբիմաստները՝ նախապատուութիւն տալով շարադրանքի լեզուի հոմանիշներին: Ուստի, աշխատանքում փորձել ենք ի մի բերել առկայ նիւթը՝ առաջարկելով դասական հայերէնի նախդիրների գործածութեան այնպիսի մեկնաբանութիւն, որն ընդհանրացուած յատկանիշների օգնութեամբ սահմանում է նախդիրների՝ գրաբարեան լեզուամտածողութեան առանձնայատկութիւններից ծագող տարբերութիւններն ու նրբիմաստները, փաստում ենք դրանց բառային իմաստը, բացայայտում եւ յստակեցնում դրանցով ձեւաւորուող խնդրային ու պարագայական յարաբերութիւնների բնոյթը եւ վերհանում նախդիրների բառային եւ քերականական իմաստների բուն նշանակութիւնների եւ դրանցով ձեւաւորուող հասկացական-տրամաբանական յարաբերութիւնների պնակը:

Թէեւ աշխարհաբարին անցնելու փուլում նախդիրները գրեթէ ամբողջովին դուրս են մղուել գործածութիւնից, դրանց կենսական անհրաժեշտութիւնը մինչ օրս շարունակում է գիտակցուել նախդիրներով հարուստ եւրոպական լեզուներից կատարուող թարգմանութիւնների պարագայում եւ կարող է պարարտ հող ստեղծել դրանց նոր վերածննդի համար: Ուստի, գրաբարեան նախդիրների լեզուագործածութեան հիմքում ընկած հոգեբանական ընկալումների պարզաբանումը եւ, որպէս արդիւնք, դրանց լեզուամտածողութեան իւրայատկութիւնների ճշգրտումը, կարող են մեծապէս նպաստել թէ՛ հին հայերէնի դասաւանդման դիւրացմանը, եւ թէ՛ խօսքի այս կարեւոր մասի ընձեռած միջոցներ

31 Քոսյան Վ., Գրաբարի բառակապակցութիւնները, Երեւան, 1980, էջ 184:
 32 Առաքելեան Վ., Գրաբարի քերականութիւն, Երեւան, 2010, էջ 200:

րի արդիւնաւետութեան արժանի գնահատմանը մեր լեզուի յետագայ զարգացման գործում՝ նոր ճկունութիւն հաղորդելով հայերէնի բազմապիսի շարահիւսական հնարքներին:

Ներգոյական հոլովի խնդիրը

Նախդիրների քննութեան հարցն աւելի է բարդանում, երբ հաշուի ենք առնում գրաբարի հոլովման համակարգի կառուցուածքի վերաբերեալ ընդունուած պատկերացումները, որոնք մինչ օրս մնում են «եռափեղկուած»: Լատինաբան մուրացածոյ քերականութեան թօթափումից յետոյ ոսկեդարեան հայերէնը վերհանելիս եւ դրանում հոլովների քանակի մասին տուեալները ճշգրտելիս հայագիտական դպրոցը որդեգրել է երկու մօտեցում, որոնց համաձայն գրաբարում կա՛մ ընդունուում է, կա՛մ չի ընդունուում ինքնուրոյն ներգոյական հոլովի առկայութիւնը³³: Սա զգալիօրէն բարդացնում է նախդիրների կիրառութիւնների շարադրանքը, ուր անհրաժեշտութիւն է առաջանում ձեւաբանական եւ շարահիւսական նոյնիմաստ կիրառութեամբ հանդէս եկող նախդիրը նկարագրելու համար իւրաքանչիւր անգամ մասնատել եզակի տրական + յոգնակի հայցական, եզակի զարտուղի տրական + յոգնակի հայցական, եզակի հայցական + յոգնակի հայցական հոլովածեւերն ըստ զանազան հոլովումների՝ ոչ մի նորութիւն չյաւելելով ինքնին խրթին եւ անդիւրընկալ պատկերին: Տարակարծութիւնների տեղիք են տուել նաեւ կոչականի՝ որպէս առանձին հոլովի գոյութեան վկայութիւնները³⁴: Այս հարցում մենք միանգամայն համակարծիք ենք Ա. Մեյէին եւ, նրա հետեւողութեամբ, Գ. Զահուկեանին եւ է. Թումանեանին, որոնք ի-

րենց աշխատութիւններում հանգամանալից քննութեան են առել խնդիրը՝ յանգելով ոչ միայն տարածամանակեայ, այլեւ համաժամանակեայ կտրուածքում նշեալ հոլովների առկայութիւնը հաստատող եզրակացութիւնների³⁵, որով գրաբարի հոլովման համակարգը ձեւաբանական տիպի տեսանկիւնից նոյնանում է հնդեւրոպական նախալեզուի ուշ փուլի համար վերականգնուող համակարգին իր ութ հոլովներով՝ տարբերուելով, ըստ էութեան, միայն վերջաւորութիւններում եւ որոշ առանձնայատկութիւններում (օրինակ՝ *genitivus partitivus*-ի գործառույթը բացառական հոլովով արտայայտելու մէջ³⁶):

Արդ, պատմահամեմատական մեթոդը փաստում է, որ եթէ ճիշտ է հնդեւրոպական նախալեզուում ներգոյականի գոյութեան մասին տեսակէտը, ապա վաղնջահայերէնից հին հայերէնին անցման ընթացքում ներգոյական հոլովը յոգնակի թւում ձեւականօրէն նոյնացել է հայցականին, երբ հնդեւրոպական նախալեզուի «յոգնակի ներգոյականի *-s-ն հայերէնում խառնուել է յոգնակի հայցականի վերջաւորութեան հետ (ի գէտս «գետերում» եւ զգէտս «գետերը»)»³⁷: Վ. Պետրոսեանը, անդրադառնալով ներգոյական հոլովի կազմութեանը, յանգում է հետեւեալ եզրակացութեանը. «Հաւանական է հայերէնի յոգնակի ներգոյականի -ս վերջը հնդեւրոպական հիմք լեզուի ներգոյականի *-su (անբուն) եւ *-oisu (բնաւոր) վերջաւորութիւններից բխեցնելը»³⁸: Ներգոյական հոլովի եզակին տրա-

33 Զահուկեան Գ., Հին հայերեանի հոլովման սիստեմը եւ նրա ծագումը, Երեւան, 1959, էջ 124:

34 Նոյն տեղում, էջ 130-132:

35 Անտուան Մեյէ, Հայագիտական ուսումնասիրություններ, Երեւան, 1978, էջ 236; Туманян Э. Г. Древнеармянский язык, էջ 195-200: Պետրոսեան Վ., Ներգոյական հոլովը հին հայերեանում, - ԲԵՂ, 3 (90), Երեւան, 1996, էջ 89-94:

36 Անտուան Մեյէ, նշ. աշխ., 1978, էջ 340:

37 Զահուկեան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 100; Նոյնի, Հին հայերեանի հոլովման սիստեմը, էջ 222-223:

38 Պետրոսեան Վ., նշ. աշխ., էջ 93:

կանի հիմքից տարբերում է Ո եւ ՈԱ հոլովման՝ ուղղականում -ի վերջածանց եւ սեռականում -ույ հոլովական վերջաւորութիւն ստացող որոշ բազմավանկ բառերում (-ուջ վերջաւորութեամբ), -ին վերջածանց ունեցող կամ Ո հոլովման ենթարկուող որոշ ածականներում, ինչպէս նաեւ անցեալ դերբայում (-ում վերջաւորութեամբ): Առանձին ձեւ ունեն ժամանականիշ որոշ գոյականներ (ամիս, ամսոյ, բայց յամսեան կամ տիւ, տուրնջեան, բայց ի տուէ եւ այլն) եւ, իհարկէ, Ո հոլովման մի շարք անուններ (-ի վերջաւորութեամբ): Վերջինիս ծագումը յստակ չէ. այն կարող է լինել թէ՛ Ի հոլովման տիպի գուգահեռ գործածութեան վերապրուկ, թէ՛ նորամուծութիւն՝ Ի հոլովման համաբանութեան ազդեցութեամբ³⁹: Մեզ առաւել հաւանական է թուում առաջին տարբերակը՝ այն պատճառաբանութեամբ, որ լեզուի պրագմատիկայի տեսանկիւնից դժուար է ենթադրել, թէ համաբանութիւնը սահմանափակուել է սոսկ մի քանի տասնյակ բառերով, երբ, առաւել հաւանականօրէն, պիտի ընդգրկելու լինէր գոյականների աւելի մեծ շարք՝ հասնելով ձեւական տարբերակման:

Փաստերի այս ամբողջութիւնը թոյլ է տալիս նշեալ հոլովը հիմնաւոր կերպով առանձնացնել իբրեւ ինքնուրոյն: Սրանով հանդերձ՝ մենք որոշակի վերապահում կանենք, քանի որ ե՛լ դիզակտիկ, ե՛լ նորմաւորող քերականութեան տեսանկիւնից մեզ այլեւս խնդրայարոյց է պատկերանում սոյն հոլովի «ներգոյական» անուանումը: Բանն այն է, որ ոսկեդարեան փուլում ներգոյականի իմաստը կերտուում է ոչ թէ ինքնորոյաբար, այլ բացառապէս ի նախդրի գուգակցութեամբ, ինչը, անշուշտ, դէպքերի մեծագոյն մասում այս հոլովի զանազանման միակ միջոցն է շարահիւսական մակարդակում (քանի որ ձեւաբանական մակարդակում կարող է նոյնանալ

նպատակի պարագայի, ուղեւորման հայցականի, գործիականի իմաստով գործածուած հայցականի եւ այլ դէպքերի հետ):

Սոյն հարցի յետագայ յստակեցման գործում մեծ ներդրում է կատարել Հ. Պ. Գոճանեանը⁴⁰, որի աշխատասիրութեամբ պարզուել է, որ հոլովական այս կառույցն իրականում հանդիպում է աւելի լայնօրէն, քան ցայսօր ընդունուած է կարծել: Ինչպէս կը համոզուենք ստորեւ, այս հանգամանքն անչափ կարեւոր է նախդիրների բազմազան գործածութեան մեկնաբանութիւնը համակարգելու, ճշգրտելու եւ դիւրացնելու համար:

Կացական հոլով

Տեսնենք այժմ, թէ հոլովի սահմանների ընդարձակումն ինչ նորութիւն է հաղորդում նախդիրներով արտայայտուող իմաստների համակարգմանը: Բանն այն է, որ յաճախ կարելի է հանդիպել այն պնդմանը, թէ դէպի առարկայ շարժման դէպքում գործածուում է ի, իսկ դէպի անձ՝ առ նախդիրը⁴¹: Ընդ որում, Ա. Աբրահամեանը առ նախդրի՝ այս իմաստով գործածութեանն անդրադառնում է «Առ նախդիրը տրական հոլովի հետ»⁴² ենթակէտում՝ առանց մասնաւորեցնելու միայն եզակի տրականում դրա առկայութեան փաստը: Նշուած ընդարձակ յօդուածում Հ. Պ. Գոճանեանը, հանգամանօրէն զննելով հրապարակում եղած հին ու նոր քերականութիւնները եւ ոսկեդարեան գրաբարի նիւթը, վերհանելով ընտիր ձեռագրերի քննական բնագրերը եւ մաղելով հնարաւոր գրչագրական սխալները, յանգում է, ի

40 Գոճանեան Պ. Վրդ., Առ նախդիրի գործածութիւնը դասական գրաբարի մէջ եւ ներգոյականը որպէս ուրոյն հոլով, - Հանդէս ամսօրեայ, 2001, էջ 77-112:

41 Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, 4-րդ հրատ., Եր., 1976, էջ 230, 254; Ծարաբխանյան Պ., Գրաբարի դասընթաց, Երեւան, 1974, էջ 254:

42 Նոյն տեղում, էջ 231:

մասնաւորի, հետեւեալ եզրակացութիւններին. «Կարեւորը կենդանի կամ ոչ կենդանի էակը չէ, այլ շարժումին իմաստի նրբութիւնը. այսինքն, շարժումը դէպի բանի մը «քով» կ'երթայ, թէ բանի մը «մէջ»... Արդ, «մէջ» իմաստով կը գործածուի ի նախդիրը, իսկ «քով» իմաստով՝ առ նախդիրը՝ ըլլա՛յ կենդանի էակ, ըլլա՛յ առարկայ:... Ինչպէս դադարում արտայայտող բայերու հետ առ նախդիրը թէ՛ կենդանի էակի, թէ՛ առարկայի հետ անխտիր կը գործածուի, նոյնը կ'արժէ նաեւ շարժում արտայայտող բայերու համար»⁴³: «Ի՛նչ հոլով է յաթոռ իմում, ի կառս իրում, եւն. ի + տրակա՞ն, թէ՛ ի + հայցական: Ո՛չ մէկը, ո՛չ ալ միւսը, այլ միայն՝ ներգոյական. որովհետեւ այդ գոյական-ածականի վերջաւորութիւնը յատուկ է միայն ներգոյականի:... Այս սահմանումը գործնական տեսակէտէ ալ ունի իր օգտակարութիւնը՝ դիւրացնելով քերականական բացատրութիւնները, ինչպէս տեսանք վերը, ... ուր դրինք պարզապէս առ + ներգոյական, փոխանակ նախապէս գործածուած երբեմն տրականով, երբեմն հայցականով բարդ մեկնութիւններուն»⁴⁴:

Այսպիսով, հեղինակն ըստ էութեան ուրուագծում է ի եւ առ նախդիրների՝ տեղային իմաստով կիրառութեան խիստ որոշակի զանազանութիւնը՝ համապատասխանաբար «ներգոյական»-«ներտեղային» (locative, inessive) եւ «մերձտեղային» (adessive, apudessive) նրբերանգներով՝ տարբերակելով նաեւ շարժման եւ դադարի վիճակները, որոնցից առաջինը կազմուում է համապատասխանաբար ի, առ + հայցական, իսկ երկրորդը՝ ի, առ + ներգոյական կաղապարներով:

Հ. Պ. Գոճանեանի դատողութիւններին շղթան շարունակելով եւ զարգացնելով՝

43 Գոճանեան Պ. Վ., Առ Ասխդիրի գործածութիւնը, էջ 98:
44 Նոյն տեղում, էջ 102:

նկատենք, որ Աերգոյական եզրոյթն այլեւս անյարմար է նախդիրների գործածութեան այս կերպի բնորոշմանը, քանի որ պատկերը շատ աւելի հարուստ է եւ հետաքրքիր: Ուստի, որպէսզի ստորեւ իւրաքանչիւր նոր նկարագրութիւն մեկնելիս ստիպուած չլինենք շեշտել Ասխդիր + անԱսխդիր Աերգոյական անտեղի բառակապակցութիւնը, անհրաժեշտ ենք կարծում սոյն հոլովին տալ այնպիսի անուանում, որը մի կողմից՝ կ'արտայայտի դրա տեղային (local) նշանակութիւնը (որի «ընտանիքի» անդամն է նաեւ բուն ներգոյականը՝ locative-ը, ի տարբերութիւն ուղեւորման հայցականի՝ lative-ի), իսկ միւս կողմից՝ կը մատնանշի դրա Ասխդրառու բնոյթը: Հարցի սպառիչ լուծումը թողնելով ապագային՝ շարադրանքում առայժմ կը կիրառենք կացական անուանումը՝ սահմանելով այն որպէս համաժամանակեայ առմամբ առանձին հոլովական կառոյց (ծագած, իհարկէ, հին ներգոյականից), որը նախդիրների հետ գուգակցուելով՝ կերտում է զանազան առաջնային եւ երկրորդային իմաստներ: Հարցի օրինակարգութիւնը եւ լիակատար պատկերը պարզելու նպատակով դիմենք մնացեալ նախդիրների գործածութեան քննութեանը:

Այսպէս, Մ. Մինասեանի մօտ կարգում ենք՝ «Զ- + եզակի տրական՝ զարկանել/հարկանել բայի եզակի անուղղակի խնդիր: Զ- նախդրով եզակի տրական անուղղակի խնդիր է առնում զարկանել/հարկանել բայը թէ՛ ներգործական եւ թէ՛ կրաւորական սեռով, թէ՛ բուն նշանակութեամբ եւ թէ՛ փոխաբերական իմաստով կազմելով դարձուածքներ, ուր Զ- + տրական = սովորական տրական»⁴⁵: Հեղինակն այնուհետեւ բերում է այս գործածութեան բազմաթիւ օրինակներ՝ Չափի հարաւ եւ ասէ (Ծն իԸ 17), Ծափ զծափի սկսաւ հարկանել

45 Մինասեան Մ., Դասական հայերէնի Ակարագրական քերականութիւն, Ժնև, 1996, էջ 261:

(Շմ 35. 7-8), Երիտասարդքն գիպայտի հարեալ՝ տկարացան (Ողբ Ե 13), Ջահի մեծի հարաւ ի միտս իւր (Եդ) եւ այլն: Մեկնաբանութեան այսպիսի ձեւի գրեթէ նոյնութեամբ կարելի է հանդիպել գրաբարի անխտիր բոլոր քերականութիւններում՝ հին թէ նոր:

Բերուած օրինակները, թուում է, կասկածի տեղիք չեն թողնում: Սակայն աւելի ուշադիր լինելու պարագայում ի շարս այլոց նկատում ենք նաեւ Ջամաթի հարկաւնէի (Ղկ ԺԱ 53) օրինակը, որը մատնում է շատ սակաւաթիւ բայերի հետ հազուադէպ գործածութիւն ունեցող $q +$ տրական համարուող կառոյցի իրական բնոյթը: Բանն այն է, որ ահ, փայտ եւ նմանատիպ այլ բառերում եթէ իրօք գործածուէր տրական հոլովը, ամալթ բառի դէպքում սպասելին կը լինէր ամալթոյ, այլ ոչ՝ ամալթի հոլովաձեւը, իսկ ծափ բառի դէպքում՝ ծափոյ, այլ ոչ՝ ծափի, որոնք զարտուղի են: Կարծում ենք, ուստի, որ նկարագրուող կառոյցում, ըստ ամենայնի, գործ ունենք ոչ թէ տրական, այլ վերը սահմանուած կացական հոլովի եզակի թուի հետ: Այսինքն, q նախդիրը տուեալ նշանակութեամբ գործ է ածուում ոչ թէ տրական, այլ կացական հոլովով: $\mathcal{Q} +$ յոգնակի հայցական կառոյցի՝ համանման իմաստով վկայուածութեան բացակայութիւնը պայմանաւորուած է ե՛ւ բայիմաստով (ոտքը, ձեռքը եւ այլն զարկանել կարելի է գրեթէ բացառապէս մեկ բանի), ե՛ւ որովհետեւ այդօրինակ կիրառութիւնը կը համընկնէր $q +$ հայցական կառոյցի հետ, որի սովորական գործառոյթը որոշեալ առմամբ ուղիղ խնդրի արտայայտումն է: Արդիւնքում $q +$ կացական կառոյցով արտայայտուող անուղղակի խնդիրը յոգնակի թուում կը խառնուէր $q +$ հայցական հոլովով նշանակուող ուղիղ խնդրի հետ, իսկ դա, ինչպէս յայտնի է, q նախդրի ամենից յաճախադէպ գործածութեան տեսակն է, եւ, իբրեւ այդպիսին, արտայայտած իմաստի տեսանկիւնից յոյժ

գերակայ է միւս բոլոր կիրառութիւնների նկատմամբ:

Ընդհանրապէս, հարկ է նկատել, որ գրաբարի ամենայաճախադէպ երկու՝ q եւ h , նախդիրները, որոնք ոսկեդարեան շրջանում հանդիպում են նախդիրների գործածութեան մօտ 90% դէպքերում⁴⁶, այս առմամբ որոշիչ են, եւ, ինչպէս ստորեւ կը համոզուենք, համաբանօրէն սահմանափակում են միւս նախդիրների կիրառութեան դաշտերը՝ նախապատուութիւն ստանձնելով այն դէպքերում, երբ առաջ է գալիս իմաստային դաշտի վերածածկում կամ խառնաշփոթ:

Վերոբերեալ քննութիւնից կարելի է թերեւս պնդել, որ ընդ + եզակի տրական, ընդ + յոգնակի հայցական կիրառութիւններում մեր առջեւ կրկին նախդիր + կացական հոլով տիպի կառոյցն է: Ըստ Մեյէի եւս՝ ընդ նախդիրը «ներգոյականի հետ ունի «հետ» իմաստը»⁴⁷: Մ. Մինասեանի մօտ կարդում ենք՝ «Ընդ «դէմ/հետ» + եզակի տրական = հակադրութեան/միասնութեան խնդիր: Ընդ նախդիրն այս «դէմ/հետ» իմաստով գործածուում է միայն եզակի տրականի հետ (յոգնակին բացառիկ ու կասկածելի է). այս նշանակութեամբ ընդ պահանջում է եւ ու դու դերանունների եզակի եւ ուրիշ խնդիրների յոգնակի հայցականը. Հմտ. Խաւսեցաւ Աստուած ընդ Նոյի եւ ընդ որդիս նորա (Մն Թ 8)»⁴⁸ եւ ապա բերում բազմաթիւ օրինակներ՝ Ածեր զարքայն Տիրան ընդ իւր (Ա Բզ 45), Մտին ընդ նմա ի հարսանիսն (Մթ ԻԵ 10), Գնա՛, դու, որդեա՛կ, ընդ առնդ ընդ այնմիկ (Տով Ե 22) եւ այլն: Միեւնոյն իմաստը շեշտելու համար գործածուում է նաեւ ընդ + յոգնակի հայցական կառոյցը, թէ՛ «հետ» նշանակութեամբ՝ Ըն-

46 Մանուկյան Գ., Նախդիրների գործածության հաճախականությունը V դարի հայ մատենագրությունում,- ԼՀԳ, 12, 1987, էջ 58:
 47 Անտուան Մեյէ, Աշխ., էջ 144:
 48 Մինասեան Մ., Դասական հայերէնի նկարագրական քերականություն, Ժնև, 1996, էջ 269:

դէ՞ր ընդ մաքսատրս եւ ընդ մեղատրս ուտէ (Մթ Թ 11), եւ թէ՛ «դէմ» նշանակութեամբ՝ Ընդ միմեանս կոռւիմ եւ միմեանց հակառակ եմ (Եզն 1338) կամ Գայր... տալ պատերազմ ընդ հայաստանեայսն (Ա Բզ 129): Ընդ որում, տեսնում ենք, որ այստեղ «դէմ» իմաստը կարելի է երկրորդաբար զարգացած համարել միեւնոյն «հետ» իմաստից, ինչպէս նոյնաբար գործածուում է արդի հայերէնում (մեկի հետ/դէմ վատ վարուել եւ այլն)՝ ժառանգուած լինելով, անշուշտ, գրաբարեան մտածողութիւնից: Այս խնդրին դեռ Կանդրազառնանք նախդիրների բառային-իմաստային արժէքը ճշգրտելիս:

Աստուածաշնչում ընդ նախդիրը գործածուում է 6465 անգամ, սակայն «հետ/դէմ» նշանակութեամբ ոչ մի անգամ չի հանդիպում ներգոյականի ուրոյն վերջաւորութիւն ունեցող բերան, գիշեր, գետին, թիւ, գութ, քրհոր, տեղի, թուղթ, ծոց, սեղան, փոր, երագ, պատիւ, այգի եւ այլ բառերի հետ: Երկու անգամ միայն հանդիպում ենք ընդ նախդրի հետ մարմին բառին՝ ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան (Եփ 2 12), Մի՛ հոգայք ընդ ոգւոյ թե՛ զի՛նչ ուտիցէք, եւ մի՛ ընդ մարմնոյ թե՛ զի՛նչ զգեանոցոք (Ղկ ԺԲ 22)⁴⁹: Առաջինը գրեթէ նոյնաբար կրկնուում է նաեւ Եզնիկի երկում՝ ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ եւ ընդ արեան (Եզն 2025-26), իսկ վերջինի հարցը յատկեցնելու նպատակով դիմեցինք Մ. Մինասեանի «Գրաբար Աւետարանների նախընտրելի տպագիրը եւ ապառնիները» աշխատութեանը, որում ճիշտ այս նախադասութեան մէջ հեղինակն առաջարկում է սրբագրել զգեանոցոք բայը երկրորդ ապառնու զգեց-ջիք ձեւով, սակայն մարմնոյ ձեւին որեւէ կերպ չի անդրադառնում: Ուստի, քանի որ հոգալ բայը սովորաբար պահանջում է գ + բացառական կամ վասն + սեռական խնդրա-

ռութիւն, իսկ ընդ նախդիրը բացառականի հետ ունի խիստ որոշակի եւ սահմանափակ տեղային նշանակութիւն միայն (ընդ աջմէ, ընդ ձախմէ, ընդ ահեկէ, ընդ արեմտից եւ այլն), ապա այս դէպքում հնարաւոր է պարզապէս ընդ + սեռական կիրառութիւնը՝ «փոխարէն» (երկրորդաբար՝ «համար») իմաստով, ինչպէս է եւ զայն առեալ տացես ընդ իմ եւ ընդ քո (Մտթ ԺԳ ԺԷ) օրինակում: Նոյն հեղինակի՝ «Եզնիկ Կողբացու «Ճառք ընդդէմ աղանդոց»-ի խնդրառութիւն»⁵⁰ աշխատութեան մէջ բացակայում է հոգալ բայը, ուստի ձեռագրական տարբերակների մասին յաւելեալ ճշգրտում մտցնել կրկին չի յաջողում: Ի յաւելումն նշենք նաեւ, որ մինչ այժմ յայտնի է Եզնիկի երկի միայն երկու ձեռագիր՝ կորած զմիւսնեանը եւ երեւանեանը, ընդ որում՝ թէ՛ մեկը, թէ՛ միւսը արտագրուած են արդէն իսկ խաթարուած բնագրերից⁵¹, ուստի եթէ անգամ սոյն ձեւը կիրառուած է տրական, այլ ոչ կացական հոլովի գուգորդութեամբ, միեւնոյն է՝ ըստ էութեան կասկածելի է սոսկ եզակի վկայութեան պատճառով: Ուստի եզակի այս դէպքը մեզ միարժէք հնարաւորութիւն չի ընձեռում տարորոշելու տրական թէ՛ կացական հոլով լինելը, առաւել եւս, երբ հնարաւոր են բազմապիսի գրչական աղաւաղումներ:

Սակայն Ա եւ Ո-ՈԱ հոլովման հասարակ եւ յատուկ անունների քննութեան շարունակութիւնն իսկ երեւան է հանում ուշագրաւ մի պատկեր՝ յատակութիւն հաղորդելով հարցին: Բանն այն է, որ եթէ միւս հոլովումների պարագայում եզակի տրական եւ եզակի կացական հոլովաձեւերի տարբերակումը գրեթէ անհնարին է (քանի որ «ներգոյականի» ուրոյն -ում, -ոջ, եւ Ուսան վերջաւորութիւններն ընդհանուր առմամբ

49 Մինասեան Մ., Գրաբար Աւետարանների նախընտրելի տպագիրը եւ ապառնիները, ԺճՆ, 2004, էջ 105:

50 Մինասեան Մ., Եզնիկ Կողբացու «Ճառք ընդդէմ աղանդոց»-ի խնդրառութիւն, ԺճՆ, 2013:
51 Մինասեան Մ., Գրչագրական ուղղումներ Եզնիկ Կողբացու երկում, ԺճՆ, 2013, էջ 4:

յատուկ են նաեւ տրականին, թէեւ առան-
ձին բառերի դէպքում գերազանցապէս կի-
րառուում են ներգոյականի իմաստով, ինչի
պատճառը սեռական-տրականի թոյլ տար-
բերակուածութեան համաբանական ազդե-
ցութիւնն է հոլովի քերականական կարգ
ունեցող գրեթէ բոլոր խօսքի մասերում,
բացի դերանուններից), ապա Ա եւ Ո-ՈԱ
հոլովումներում դրանք արդէն յատկօրէն
տարբերակուած են՝ բուն ներգոյականը,
յատուկ վերջաւորութեամբ օժտուած բառե-
րից զատ, կազմում է միայն հայցականից:
Եւ հետաքրքիր է, որ վերջիններումս ընդ
նախդիրը «հետ/ դէմ» իմաստներով գոր-
ծածուում է միայն տրականի, այլ ոչ՝ հայցա-
կանի հետ, ինչում կարելի է համոզուել Եւ
զնոյն բարեկամութիւն կալաւ ընդ աշխարհիս
Հայոց եւ ընդ թագաւորին մերում Վոսմշապիոյ
եւ ընդ մեծին Սահակայ (Խոր ԾԱ) օրինակից,
որում կողք-կողքի յիշատակուած են
ինչորոյ առարկայ Ո եւ Ա հոլովման յա-
տուկ անուններ, նաեւ՝ Եդ ուխտ ընդ Ծապիոյ
արքային Պարսից (Բուզ Դ ԻԳ); Առ նովիմբ
Ժամանակաւ այլ ոմն կեցեալ Վզրիկ Խաքան, որ
թշմամութեամբ ընդ Կամարայ որդւոյ նորա
վարէր (Խոր Բ ԶԷ): Վերջին օրինակից երե-
ւում է նաեւ, որ դրութիւնը նոյնն է նաեւ Ո
հոլովման այն բառերի դէպքում, որոնք
վերջանում են -ի ձայնաւորով, սեռական-
տրականում ունեն -ւոյ վերջաւորութիւնը
եւ ներգոյականում չեն ստանում -ւոջ վեր-
ջաւորութիւլ, ինչպէս՝ կապեցաւ ընդ ոգւոյն
Դաւթի (Ա Թագ ԺԸ 1); Տէր Յիսուս Քրիստոս
ընդ ոգւոյդ քում (Ա Տիմ Դ 22), սակայն՝ եւ գի-
տաց Յիսուս յոգի իր (Մկ Ա 8):

Այս հանգամանքի ակունքում, թե-
րեւս, ընդ եւ ի նախդիրների իմաստային
դաշտերի վերածածկումն է՝ պայմանաւո-
րուած ոսկեդարեան շրջանում դրանց փոխ-
նիփոխ գործածութեամբ, երբ ընդ նախդիրը
երբեմն կիրառուում էր նաեւ «մէջ»/«միջով»
իմաստով եւ դրանցից բխող քերականական
զանազան զարգացումների նշանակու-
թիւններով (ընդ ելանելն եւ յելանելն; ընդ բա-

զում տեղիս եւ ի բազում տեղիս; ընդ երկուս
հատանել եւ յերկուս հատանել), որպիսի
«ներգոյական» կ'ընկալուէին նաեւ ընդ Ծա-
պուհ (Շապուհի մէջ/միջով), ընդ Սահակ
(Սահակի մէջ/միջով) եւ նմանօրինակ այլ
կապակցութիւնները, եթէ պահպանուէր ընդ
+ կացական տարբերակը, քանի որ վերոն-
շեալ դէպքերում ի նախդրի յաճախադի-
պութիւնը կը պայմանաւորէր ընդ նախդրի
արտայայտած նրբերանգը: Ենթադրելի է,
որ սա է յանգեցրել «մէջ/միջով» եւ «հետ»
իմաստների ձեւային տարբերակման անհ-
րաժեշտութեանը (յօգուտ ի նախդրով կազ-
մուող ձեւերի) այն դէպքերում, երբ դրանք
զանազանելի են, այսինքն՝ Ո-ՈԱ եւ Ա հո-
լովման բառերում:

Յամփոփումն, կարելի է ենթադրել, որ
մինչդասական հայերէնի ինչ-որ փուլում
գործուն է եղել նաեւ ընդ + կացական կա-
ռոյցը («հետ», իսկ երկրորդաբար նաեւ՝
«դէմ» ընդհանուր բառային իմաստով), ո-
րը լեզուի պատմական զարգացման ըն-
թացքում քայքայուել է՝ խոսսափելու հա-
մար ի նախդրի իմաստային դաշտի հետ
վերածածկման արդիւնքում առաջ եկող
երկիմաստութիւնից, եւ տարրալուծուել
ընդ + եզակի տրական եւ ընդ + յոգնակի հայ-
ցական կառոյցին: Հարցին դեռ կ'անդրա-
դառնանք սոյն յօդուածի «Նախդիրը հայ-
ցական հոլովի հետ» բաժնում:

Ըստ նախդրի դէպքում լեզուական
նիւթը երեւան է հանում փոքր-ինչ այլ ի-
րադրութիւն:

Մ. Մինասեանը ներկայացնում է ըստ
նախդրի «համաձայն, համեմատ» իմաստի
կերտման հետեւեալ կանոնները. «Ըստ
«ըստ, համաձայն, համեմատ» + տրական =
համեմատութեան կամ համաձայնութեան
պարագայ... ա. Ըստ «ըստ, համաձայն, հա-
մեմատ» + եզակի տրական գոյական կամ
դերանուն:... գ. Ըստ «ըստ» + անեզա-

կան/յոզնակի տրական:...»⁵² եւ «Ըստ «ըստ» + հայցական = համեմատութեան կամ համաձայնութեան պարագայ... ա. Ըստ «ըստ» + ես, դու դերանունների (եզակի) հայցական:... գ. Ըստ «ըստ» + -Ո հոլովման բացառաբար եզակի հայցական գոյական:... դ. Ըստ «ըստ» + անեզական կամ յոզնակի հայցական»⁵³: Հեղինակի ներկայացրած օրինակները չեն ընդգրկում այնպիսի բառեր, որոնցում եզակի տրականի հոլովածեւում հնարաւոր լինի ճանաչել եզակի կացականի պահանջած վերջաւորութիւնը: Այդպիսիք վերհանելու համար դիմեցինք Աստուածաշնչին, որում ըստ նախդիրը հանդիպում է 1769 անգամ եւ համեմատութեան կամ համաձայնութեան իմաստով կիրառութեան բոլոր դէպքերում պահանջում է տրական, այլ ոչ ներգոյական հոլովի եզակի. Դուք ըստ մարմնոյ դատիք, ես ոչ դատիմ (ՅՀ Ը 15), Եւ արասցեմ ըստ բերանոյ Ահարոնի եւ որդոց անորա (Թիւ Դ 27) եւ այլն: Կացական հոլովի դէպքում սպասելի կը լինէին մարմնի եւ բերանի ձեւերը: Խնդրի պարզաբանման համար առաջարկում ենք հետեւեալ մեկնաբանութիւնը:

Ինչպէս յայտնի է, լեզուական փոփոխութիւնների միտումները կարող են պայմանաւորուած լինել ոչ միայն ուղղակի ազդեցութիւններով, հնչիւնական փոփոխութիւններով, այլեւ զուտ պրագմատիկ՝ գործառական հանգամանքներով: Մասնաւորապէս, տուեալ հարցում կարեւոր է ոչ միայն լեզուական միաւորի գործածութեան յաճախականութիւնը, այլեւ համատեքստը, որում հասկացութիւնը գործածուում է: Ինչպէս նշում է Ջ. Բայբին, «certain words tend to be used in certain collocations or construction»⁵⁴, այն է՝ որոշ

բառեր միտում ունեն գործածուելու որոշակի բառակապակցութիւններում կամ կառոյցներում: Ընդ որում, մի կողմից՝ յաճախադէպ բառերն ու արտայայտութիւնները հնչիւնական կրճատման են ենթարկուում աւելի արագ, քան սակաւ եւ միջին յաճախականութեան ձեւերը, միւս կողմից՝ դրանք կայունացնում են յաճախադէպ կառոյցների ձեւաբանական-չարահիւսական կազմութիւնը⁵⁵, քանի որ խօսքային մակարդակում շարունակական կրկնութեան շնորհիւ աւելի յստակ են զետեղուում ակտիւ յիշողութեան մէջ եւ սակաւ ենթարկուում համաբանական փոփոխութիւնների: Սրանով են բացատրելի լեզուի զարգացման բազում հանգամանքներ, որոնց թւում եւ ամենօրեայ՝ առաւել յաճախադէպ բառերում անկանոն հոլովածեւերի յարատեւումը:

Ըստ նախդիրը, գրաբարում իր գործածութեան յաճախականութեամբ գերազանցելով միայն ամենահազուադէպ ց նախդրին⁵⁶, ըստ էութեան, առաւելագոյն չափով է ենթարկուած եղել համաբանութեան համահարթեցնող ազդեցութեանը: Ուստի ենթադրում ենք, որ դրա արդիւնքում նախ՝ քայքայուել է ըստ + կացական կառոյցը՝ ընդ նախդրի նմանութեամբ վերածուելով ըստ + եզակի տրական եւ ըստ + յոզնակի հայցականի, իսկ ապա մոռացուել է տրականի եւ հայցականի եզակի թէ յոզնակի թուով կիրառութեան նրբութիւնը, ինչի արդիւնքում ըստ նախդրի կիրառութիւնը «ըստ, համաձայն, համեմատ» նշանակութեամբ զուգահեռաբար սփռուել է եզակի/յոզնակի տրական եւ եզակի/յոզնակի հայցական հոլովածեւերով՝ առանց նրբերանգային տարբերակման: Ի դէպ, Գոճանեանը եւս յանգում է նմանատիպ

52 Մինասեան Մ., Դասական հայերէնի ակարագրական քերականութիւն, էջ 273:
 53 Նոյն տեղում, էջ 272:
 54 Joan Bybee, *From Usage to Grammar: The Mind's Response to Repetition*, - Language 82, 4, 2006, էջ 714:

55 Նոյն տեղում, էջ 715:
 56 Մանուկյան Գ., Նախդիրների գործածության հաճախականությունը, էջ 53-58:

եզրակացութեան⁵⁷, իսկ ըստ նախդրի հետ ներգոյականի կիրառութեան հնարաւորութիւնը մատնանշում է նաեւ Մեյէն⁵⁸:

Ինչ վերաբերում է ց նախդրին (որի ընդհանուր բառային իմաստն է «ընդհուպ մինչեւ»), ապա հարկ է նշել, որ հետզհետէ գործածութիւնից դուրս մղուող եւ տակաւին դասական հայերէնում իսկ մնացորդային կիրառութեամբ պահպանուած այս նախդրի սակաւ վկայուածութիւնը, ցաւօք, թոյլ չի տալիս լիարժէք պատկերացում կազմել այս նախդրի երբեմնի պատկերի վերաբերեալ, ուստի տուեալ պարագայում բոլոր դատողութիւններն ըստ էութեան կը լինեն բացառապէս մտահայեցողական: Այդուհանդերձ՝ նշենք, որ ց նախդրով փոխանցուող «ընդհուպ մինչեւ» (*terminative, pertinent*) նշանակութիւնը թերեւս բացառում է դրա կիրառութիւնը դադարի վիճակ բնորոշող կացական հոլովի հետ, ինչի արդիւնքում ց-ին հանդիպում ենք միայն շարժում ցոյց տուող *lative*-ի՝ ուղեւորման հայցականի խնդրառութիւն պահանջող սակաւաթիւ բայերի կողքին: Սրանում կարելի է համոզուել՝ նկատի առնելով Սկսեալ ի Գալիլէէ միւսէն ցայսր (*Ղկ ԻԳ 5*) օրինակը, որում գործածուած է ուղեւորման այսր մակբայը դադարի աստ մակբայի փոխարէն: Մեզ յայտնի չեն ձեռագրական այնպիսի տարբերակներ, որոնցում նշմարելի լինի ց + տրական կառոյց, եւ այդպիսիք գտնելու խնդիր սահմանելն առայժմ դուրս է մեր տեսադաշտից:

Այսպիսով, կատարուած համառօտ քննութիւնը պարզորոշ ցոյց է տալիս, որ գրաբարեան նախդիրների կիրառութեան հոլովական յարացոյցներով ցրուած-առանձնացուած դէպքերի մի մասն ի յայտ է բերում յստակ համակարգուածութիւն՝

իրականում կազմելով նախդիր + կացական կառոյց, որում նախդիրները, օժտուած իրենց ներյատուկ հոլովակերտ գործառոյթով, արտայայտում են բազմապիսի պարագայական եւ խնդրային յարաբերութիւններ, որոնք ընդհանուր քերականութիւնից յայտնի են *locative, inessive, adessive, apudessive, terminative, pertinent* եւ այլ անուանումներով: Այս փաստը, բացի նրանից, որ թոյլ է տալիս յաւելեալ կշիռ հաղորդել նախդիրների հոլովակերտ բնոյթին, լուրջ ուշադրութեան է արժանի նաեւ այն առմամբ, որ դրանում իր յստակ արտայայտումն է գտնում նախդիրների առաջնային բառական արժէքը, առանց որի պրագմատիկ գիտակցման՝ բոլոր այս կիրառութիւնները գործնականում կը դառնային անհնարին եւ վաղուց ի վեր դուրս մղուած կը լինէին դասական հայերէնից: Յետագայ դարերում է միայն, որ դրանց իմաստի յստակութիւնը սկսում է աստիճանաբար մթազնել (դասական շրջանում այս գործընթացը թերեւս մեկնարկել էր դեռեւս միայն ց եւ ըստ նախդիրներում)՝ տեղիք տալով խառնաշփոթի, մինչեւ ի վերջոյ լեզուն արտամղում է մոռացութեան եզրին յայտնուած այս խօսքի մասը՝ դրա կիրառութիւնները փոխարինելով թափանցիկ իմաստ ունեցող ետադրութիւններով (վրայ, տակ, համար, պատճառով, նպատակով, օրօք, մասին եւ այլն):

Նախդիրը բացառական հոլովի հետ

Անխտիր բոլոր քերականութիւններում կրկնուած է այն միտքը, թէ պարտադրաբար նախդիր պահանջող հոլովների (հայցական, բացառական, ներգոյական) հետ այլ նախդիրների զուգորդման դէպքում սովորական նախդիրն ընկնում է՝ տեղը զիջելով նոր նախդրին եւ բնորոշուելով իբրեւ, օրինակ, ընդ + աննախդիր բացառական, ի + աննախդիր հայցական եւ այլն: Սակայն ինչպէս վերը նկատեցինք կացական հոլովի առնչութեամբ, ներգոյա-

57 Հ. Պօղոս Գոճանեան, Դասական գրաբարի գործնական քերականութիւն, Վիեննա-Երեւան, 2011, էջ 144 (տողատակ):
58 Անտուան Մեյէն, նշ. աշխ., էջ 349:

կանի նշանակութիւնը հաղորդւում է մի-միայն ի նախդրով գործածուելիս, եւ փաստեցինք, որ միւս նախդիրներով կիրառուելու դէպքում կացական հոլովը ձեռք է բերում միանգամայն այլ իմաստներ եւ նրբերանգներ: Մեր կարծիքով՝ նոյնն է նաեւ բացառական հոլովաձեւի հետ գրաբարեան նախդիրների գործածութեան պարագան: Բացառական հոլովը, թէեւ հոլովիչների դասերի մի մեծ հատուածի համար ունի ինքնուրոյն հոլովաձեւ, միեւնոյն է՝ պարտադրաբար պահանջում է նաեւ ի նախդիրը⁵⁹ յոգնակի հոլովում սեռական եւ տրական հոլովների հաղորդած իմաստներից զանազանուելու համար:

Հին քերականները զ եւ ի/՛ միահնչիւն նախդիրները համարել են հայցական եւ բացառական հոլովների անօտարելի մասը, ինչն արտայայտել են նաեւ ուղղագրութեան մէջ՝ բառին սերտաձած գրութեամբ (զիս, յիս, յիւէն եւ այլն): Ա. Աբրահամեանը շեղւում է այս կանոնից՝ փակագծերում առնելով զ-ն, բայց ոչ ՚-ն: Արեւմտեան հայագէտներն այս հարցում փոքր-ինչ այլ մօտեցում ունեն: Մեյէն եւ Ենսենն առհասարակ բաց են թողնում նախդիրները, իսկ Մաննը պահպանում է զ-ն (գծիկով)՝ բաց թողնելով ի/՛-ն: Կացական հոլովի քննութիւնից ակնյայտ է դառնում, որ այս մօտեցումը գոյութեան իրաւունք ունի, ուստի մենք եւս հետեւում ենք նոյն տրամաբանութեանը՝ համաժամանակեայ կտրուածքում տարբերակելով հոլովաձեւը հոլովից, իսկ հոլովին ներյատուկ նշանակութիւնը՝ անխորհի հոլովի նշանակութիւնից: Այս փաստը ժամանակին նկատել է Մեյէն՝ նշելով, որ «Տեղի ունեցած ամենամեծ նորագոյացումը նախդիրների լայն կիրառութիւնն է.

սակայն այստեղ հայերենը բնորոշ ոչինչ չունի իր մեջ, որովհետեւ նույն երեւույթը նկատելի է նաեւ հնդեւրոպական մյուս լեզուների մեծամասնութեան մեջ. բայց հայերենում դա հատկապէս նկատելի է իր ձեռք բերած կարեւորութեամբ. նույնիսկ ուղիղ խնդիր հայցականը որոշ դեպքերում նախդիր է ընդունում»⁶⁰, եւ յանգելով հետեւեալ եզրակացութեանը. «Ուրեմն, արդի հայերենի թեքումը հապէս շեղվել է հնդեւրոպական տիպից եւ, հնդեւրոպական թեքման շարունակութիւնը լինելով հանդերձ, այն բոլորովին այլ տիպի է, որի նմանութիւնը հարավային կովկասյան տիպի հետ ակնառու է»⁶¹: Հարաւային կովկասեան լեզուների հետ նմանութեան մասին պնդման արժանահավատութեան քննարկումը թողնելով այլոց՝ այստեղ այժմ անդրադառնանք բացառական հոլովաձեւի հետ նախդիրների կիրառութեանը եւ դրանցով ձեւաւորուող իմաստներին:

Այսպիսով, բացառականը (մեր ընկալմամբ՝ ի սկզբանէ աննախդիր) գրաբարում զուգորդւում է առ, գ, ընդ, ըստ եւ ի նախդիրների հետ՝ պարագայական եւ խնդրային բազմազան իմաստներ հաղորդելով մտքին: Եթէ յատուկ չի նշուում, այսուհետեւ ներկայացուող բոլոր նկարագրութիւններն ամբողջովին քաղուած են Մինասեանից՝ մեկնաբանութիւններով եւ օրինակներով հանդերձ⁶²: Նկատենք նաեւ, որ Մինասեանը եւս բացառական ասելով հասկանում է բացառականի հոլովաձեւը, այլ ոչ՝ ի + բացառական կառոյցը:

Առ Անխորհի

Բացառական հոլովի հետ առ նախդիրը կերտում է հետեւեալ իմաստները՝
Առ + էլման բացառական: Համազօր է էլման բացառականի սովորական ի նախդիրին:

59 Պետրոսեան Վ., Հին հայերէնի բացառական հոլովի վերջաւորութիւնների ծագումը, - Հայկազեան հայագիտական հանդէս, Բէյրութ, 2014, հտ. ԼԳ, էջ 32:

60 Անտուան Մէյն, Աշ. աշխ., էջ 339:

61 Նոյն տեղում, էջ 340:

62 Մինասեան Մ., Դասական հայերէնի ակարագրական քերականութիւն, էջ 257-281:

Հանդիպում է առ եւ առ ի ձեւերով: Օրինակ՝ Տեսաք զփառս անորա, զփառս իբրև զմիաձնի առ ի Հարիւ (ՅՏ Ա 14); Ամաք... առ եթերացն առընթեր [Մինասեանն ունի առ ընթեր — Վ.Ղ.] լցեալ... զարարչին հրամանս կատարեն (Ագ 283-294):

Առ ի + բացառական = «մեկի կողմից»: Օրինակ՝ Առ ի քէն իմաստութիւնդ հետի է ի մմանէ (Իմ Թ 6); Տեսցուք զառ ի քաղ-դէացոց զիրեանց մախնեաց պատմեալ զժամանակագրութիւն (Ա Թոռ 331):

Առ «համար» + բացառական = նպատակի պարագայ բացառական: Համազոր է «համար» կապին, սակայն նախդրային որոշ կապակցութիւններ մօտենում են պատճառի պարագային: Հանդիպում են իբրեւ առ եւ առ ի ձեւերով: Օրինակ՝ Հանցէ ի զոհէն զառ ի յիշատակէ անորա (Ղեւ Բ 9); Առ իմէ՞ իցեն ինձ այն անդրանկութիւնք (Մն ԻԵ 32); Զրուան առ ի չըրելոյ զուխտն աւէ ցԱրհմնն (Եզն 1328): Զարծաթն եւ զոսկին, որ պատեալ է զնքաւք առ զարդուէ (Թղթ 23):

Առ «պատճառով» + բացառական = պատճառի պարագայ: Հանդիպում է առ եւ առ ի ձեւերով: Որոշ բառակապակցութիւններ մօտենում են նպատակի պարագային: Օրինակ՝ Առ չծուծալոյ ցանկութեանն արկանեն միսանգամ զնոսա ընդ ապաշխարհութեամբ (Եզն 3361-62); Վաղվաղակի բուսաւ առ ի չգոյէ հիւթոյ երկրին (Մթ ԺԳ 5); Որպէս թե առ ի չգոյէ կաթին յայն յաւժարեաց (Եզն 544-545); Առ ի չկալոյ ի սահմանս ամուսնութեանն (Եզն 930-931):

Հ. Պ. Գոճանեանն իր վերոբերեալ յօդուածում, ի թիւս այլոց, այս հոլովի հետ առ նախդրի կիրառութիւնների վերաբերեալ յանգում է հետեւեալ դատողութեանը. «Բազմաթիւ օրինակներու համեմատութեամբ անդրադարձայ, որ առ կը գործածուի ձայնաւորով սկսող բառերու առջեւ միայն, մինչ սովորական գործածութիւնն է՝ առ ի: Այդ եղաւ լուծման բանալին ոչ միայն այս, այլեւ ուրիշ խնդիրներ-

րու համար»⁶³, իսկ ապա ներկայացնում իր եզրայանգումներն այս հարցի առթիւ, ըստ որոնց՝

Առ + մախդրով բացառականը գործածւում է թէ՛ գոյականի եւ թէ՛ անորոշ դերբայի համար՝ արտայայտելով նպատակ: Զայնաւորով սկսող բառերից առաջ ի նախդիրն ընկնում է: Միայլ է այս ձեւը տրական կամ սեռական համարելը:

Առ + մախդրով բացառականը նշանակում է «մեկի կողմից/մօտից»: Առ նախդիրն այս դէպքում աւելադրութիւն է, քանի որ պարզ բացառականը հաղորդում է գրեթէ նոյն իմաստը: Օրինակներ «կողմից» իմաստով՝ Նա խօսեացի առ ի քէն ընդ ժողովրդեանն (Ել Գ 26); Անհնարիմք առ ի մարդկանէ հնարատրք են Աստուծոյ (Ղկ ԺԸ 27): Օրինակներ «մօտից» իմաստով՝ Առ ի մէնջ ելին, բայց ոչ էին ի մէնջ, զի եթե ի մէնջ էին, ապա առ մեզ մնային (Ա ՅՏ Բ 19); Մինչ չեւ եկեալ էին ոմանք առ ի Յակոբայ (Գղ Բ 12): Իբր աւելադրութիւն՝ Քոյր է իմ առ ի հարիւ եւ ոչ առ ի մարիւ (Եփ Ա 55): Վերջին կիրառութիւնը Մինասեանը համարում է ետդասական⁶⁴:

Առ + մախդրով բացառականն արտայայտում է պատճառ եւ գործածւում թէ՛ գոյականով, թէ՛ անորոշ դերբայով: Այստեղ առ նախդիրը աւելադրութիւն է, սակայն ձայնաւորով սկսող բառից առաջ ի նախդիրն ընկնում է՝ թողնելով միայն առ:

Ընդհանուր առմամբ համաձայն լինելով հեղինակի համակարգման սկզբունքին՝ այդուհանդերձ համարում ենք, որ առ նախդրի յաւելադրութիւնը «կողմից/մօտից» նշանակութեամբ ոչ միշտ է սոսկ յաւելադրութիւն եւ կրկին կոչուած է զանազանելու «միջից» իմաստը «մօտից» իմաս-

63 Գոճանեան Պ. Վ., Առ մախդրի գործածութիւնը դասական գրաբարի մէջ, էջ 92:

64 Մինասեան Մ., Դասական հայերէնի նկարագրական քերականութիւն, էջ 11:

տից, իսկ շատ դէպքերում անգամ նաեւ պրագմատիկ եւ շարահիւսական անհրաժեշտութիւնն է, ինչպէս նկատելի է Տեւցուք գառ ի քաղղէացոց զիրեանց մախնեաց պատմեալ զԺամանակագրութիւնն օրինակից, քանի որ յայտնի է, որ խօսքում զ եւ ի նախդիրների հանդիպելիս դրանց միջեւ դրուում է առ նախդիրը՝ խոսսափելու համար զի շողկապի հետ հնչիւնապէս նոյնանալուց⁶⁵: Յաճախ նաեւ անհրաժեշտ է շեշտել «կողմից» կամ «մօտից» իմաստը, յատկապէս եթէ խօսքը վերաբերում է անձերին, այլ ոչ առարկաներին (թէեւ այդ դէպքում եւս երբեմն կարելոր է շեշտել առարկայի մօտից թէ միջից դուրս գալու հանգամանքը), ինչպէս երեւում է Առ ի մէնջ էլիս, բայց ոչ էլիս ի մէնջ, զի եթէ ի մէնջ էլիս, ապա առ մեզ մնայիմ օրինակից, քանի որ առ նախդրի բացակայութեամբ այն կը դառնար ի մէնջ էլիս, բայց ոչ էլիս ի մէնջ, զի եթէ ի մէնջ էլիս, ապա առ մեզ մնայիմ՝ ոչ միայն ոճական, այլեւ իմաստային առմամբ ծանր եւ խճողուած մի նախադասութիւն: Պատկերացնենք դրա թարգմանութիւնը. «Մեզնից ելան, բայց մեզնից չէին, քանի որ եթէ մեզնից լինէին, մեզ մօտ կը մնային»: «Մեզնից ելան, բայց մեզնից չէին» արտայայտութիւնը, թէեւ առաջին հայեացքից սովորական է, բայց եււայնպէս անյստակ է թողնում նեռերի՝ տուեալ խմբին պատկանելը կամ չպատկանելը: Ուստի, կարելոր է շեշտել, որ թէեւ «մեր մօտից ելան, բայց մեր միջից չէին [այսինքն՝ «մեզնից մեկը չէին»։ այստեղ գործ ունենք մասնական սեռականի նշանակութեամբ առնուած բացառականի հետ], քանի որ եթէ մեր միջից լինէին [այ-

սինքն՝ պատկանէին մեր շարքերին], մեզ մօտ կը մնային»: Միտքն այլեւս միանգամայն յստակ է: Այսինքն, զոյգ ի մէնջ կողք կողքի ունենալը կը դժուարացներ ելման բացառականը մասնական սեռականի առմամբ բացառականից զանազանելը: Այսպիսի նրբութիւնները կարելոր են իւրաքանչիւր առանձին դէպքում այս կամ այն նախդրի աւելադրութիւնն թէ անհրաժեշտութիւնն լինելու հարցը քննելիս եւ այս իսկ նրբութիւններն են, որ մեզ թոյլ են տալիս ձեւակերպել հակառակ կանոնը, ըստ որի՝ ոչ թէ առ նախդիրն է յաւելադրութիւն, այլ չնշուածաւորուած ի նախդրով դրա փոխարինումն է տուեալ համատեքստում տարբեր նրբիմաստների ոճական զանազանման անհրաժեշտութեան բացակայութեան հետեւանք: Բերուած նախադասութիւնը կարելոր մի օրինակ է, որը թոյլ է տալիս աւելի խորն ըմբռնել բացառականութեան երանգները տարբերակող լեզուամտածողութիւնը:

Անդրադառնանք այժմ տուեալ կառոյցում պատճառի եւ նպատակի տարբերական խնդրին, ընդ որում՝ ոչ միայն բացառական, այլեւ կացական հոյովով կազմուելիս: Այս հարցը մինչ օրս չի ստացել սպառնիչ պատասխան: Ինչպէս կարծում է Հ. Պ. Գոճանեանը՝ «Ընդհանրապէս հիները չեն զանազաներ պատճառ եւ նպատակ արտայայտող ձեւերու տարբերութիւնը: Յայտնի է, որ աշխարհաբարի մէջ միեւնոյն բառը (համար) կը գործածենք թէ՛ պատճառ եւ թէ՛ նպատակ արտայայտելու»⁶⁶: Մեր դիտարկումներն ու հաշուումները, սակայն, ցոյց են տալիս, որ միջոցը զուտ շարահիւսական է եւ հնչերանգային: Ազատութեան մեծ աստիճանով հանդերձ՝ հին հայերէնում (աշխարհաբարի պէս) սովորական է SVO (ենթակա-ստորոգեալ-խնդիր) շարահասութիւնը, իսկ լրացումների դիրքը նախադա-

65 Հ. Վրթանէս Չալիխեան, *Քերականութիւն հայկազնեան լեզուի*, էջ 450: Յետագայ դարերում յունաբան դպրոցը սկսեց անտեսել այս կանոնը՝ ներմուծելով ապաթարց՝ զ՛ի: Սա արդէն, ի դէպ, զուտ գրատր խօսքի արտայայտութիւն է, քանի որ բանատր արտայայտուելու դէպքում չէր կարողանայ զանազանուել զի շողկապից: Տե՛ս Մորադյան Գ., *Հունարանությունները դասական հայերենում*, Երեւան, 2010, էջ 144-145:

66 Գոճանեան Պ. Վ., *Առ նախդրի գործածութիւնը*, էջ 89:

սուլթեան մէջ յաճախ պայմանաւորուած է տրամաբանական հերթագայութեամբ: Արդի հայերէնի օրինակները ցոյց են տալիս, որ պատճառի պարագան նախադասութեան մէջ աւելի յաճախ հանդէս է գալիս նախադաս դիրքում, իսկ նպատակի պարագան՝ ետադաս: Կարծում ենք՝ նոյնն է նաեւ գրաբարում, այսինքն՝ եթէ որեւէ միտք յատուկ շեշտուած չէ, ապա նախադաս շարագասութիւնն առաւելապէս պէտք է ընկալել իբրեւ պատճառի պարագայ, իսկ ետադասը՝ նպատակի: Յաւօք, շեշտադրութեան ուղղակի վկայութիւններ մեզ չեն հասել, քանի որ, ինչպէս յայտնի է, հինգերորդ դարում կէտադրութեան յստակ կանոններ դեռ մշակուած չեն եղել, իսկ առողանութեան նշանները, բացի որ ունեցել են շատ սահմանափակ կիրառութիւն, առհասարակ ստեղծուել եւ տարածուել են ուշ միջնադարում⁶⁷, ուստի ոսկեդարեան նիւթը պարզաբանելու գործում օգուտ չունեն: Այդուհանդերձ՝ պատճառի եւ նպատակի պարագաների նշանակութեամբ առ նախդրի գործածութեան՝ Մինասեանի ներկայացրած օրինակներն ի յայտ են բերում հետեւեալ պատկերը: Պատճառի պարագայ կառոյցը 35 անգամ հանդիպում է ստորոգեալի նկատմամբ նախադաս, եւ գեթ 8 անգամ՝ ետադաս (որից երեքի ղէպքում առկայ է հարցական կամ առողանական շեշտ), իսկ նպատակի պարագայի նշանակութեամբ՝ 24 անգամ հանդիպում է ետադաս, եւ սոսկ 4 անգամ՝ նախադաս: Պատճառի յարող նշանակութեամբ նպատակի պարագան հանդիպում է 13 անգամ՝ նախադաս, եւ ընդամենը 10 անգամ՝ ետադաս: Պատկերը, կարծես, փոքրիշատէ յստակ է: Խօսքի կառուցման եւ մտքի տրամաբանական հերթագայութեան պահանջն է պատճառը նշել նախադասութեան սկզբում, իսկ նպատակը՝ վերջում: Հակառակին հանդիպելիս հարկ է են-

թադրել, որ միտքը շեշտուած հնչերանգով շրջուն շարագասութիւն ունի: Թերեւս նաեւ սա է պատճառը, որ ետադաս նպատակի պարագան շեշտում է պարտադիր ի նախդրով:

Այսու՝ կարող ենք փաստել, որ առ նախդիրը բացառական հոլովի հետ կիրառուելիս ընդհանուր առմամբ հանդէս է գալիս վերջինիս ի նախդրի հետ միասին, եւ գերազանցապէս արտայայտում «մօտ» նշանակութեան գանազան երանգներ («մօտից», «կողմից»)՝ դրանից զարգացած «պատճառով»/«նպատակով» իմաստներով, որոնք իրենց հերթին տարբերում են շարագասական եւ հնչերանգային միջոցներով:

Զ Ասխիտ

Բացառական հոլովի հետ մասնաւորիչ զ նախդիրը կերտում է հետեւեալ իմաստները՝

- Զ- «համար, ետեւից» + բացառական = նպատակի պարագայ: Ներգործական կամ կրաւորական «ուղարկել/ուղարկուել, գալ, երթալ» նշանակող բայերի նպատակի պարագան է, ուր լուելյայն է իմացում «բերելու՝ գտնելու համար» իմաստը: Օրինակ՝ Ահա արք եկին զմնանէ (Եփր Գ 22. 7); Առաքեաց Նէեմի զհրոյն (Բ Մկր Ա 20):
- Զ- «մասին» + բացառական = վերաբերութեան անուղղակի խնդիր՝ «ինչի մասին»: Այսպիսի անուղղակի խնդիր են ստանում ասացական, կարծական, պատմողական, տեղեկացման եւ նմանօրինակ բազմաթիւ բայեր կամ յարադիրներ (ըստ որում՝ նաեւ ածականով): Օրինակ՝ Զօինչ դոքա ամբաստանեն զքէն (Մթ ԻԶ 62); Զայնմանէ ասէ Առաքեալ (Եզն 3311); Գոհացայց զքէն, զի բարի արարեր ինձ (Մեկ 175, 509-510): Կամ՝ ածականի/ածականով յարադիր բայի վերաբերութեան անուղղակի խնդիր: Օրինակ՝ Ամբաստան լինի զարարչէն իրսէ (Ա Թոռ

67 Մխիթարյան Հ., Հին հայերենի կետադրութիւնը, ՊԲՀ, 4, 1960, էջ 177:

237); Ես գոհ էի զվաստակոց քոց (Ագ 30);
 Լիներին զմնանէ կաթոգին (Ա Բզ 154):
 Կամ՝ գոյականի վերաբերութեան ա-
 նուղղակի խնդիր: Օրինակ՝ ոչ է պէտ
 զայնմանէ (Ագ 69); Խնդրէին պատճառս
 զԴանիելէ (Դան 2 4):

Զ- + բացառական = տեղի պարագայ՝ «մի
 բանից, մի տեղից» իմաստով: Այսպիսի
 անուղղակի խնդիր են ստանում ներ-
 գործական կամ կրաւորական իմաստով
 «բռնել, կախել, կապել, ձգել» իմաստով
 բայերը: Օրինակ՝ Զձեռանէ առեալ նորա՝
 մոծին ի Դամասկոս (Գծ Թ 8); Բուռն հար-
 կանէր զերասանակաց ձիոյն (Բզ 270);
 Յորժամ քարշեցի զհերացն (Ա Թոռ 271):
 Հանդիպում է նաեւ զեղչուած ստորո-
 գեալով գործածուած:

Հ. Պ. Գոճանեանը փոքր-ինչ այլ կերպ
 է համակարգում⁶⁸ տուեալ կիրառութիւնը:
 Ըստ նրա՝ զ նախդիրը, դրուելով աննախ-
 դիր բացառականից առաջ, գործածուած է՝
 «Մասին» իմաստով, ինչի պատճառով կո-
 չուել եւ աւանդոյթի ուժով դեռ կոչուում է
 պատմական հոլով: Գործածուած է ասեմ,
 խաւսիմ, պատմեմ, լսեմ, գիտեմ, կարծեմ, հար-
 ցանեմ, չարախաւսեմ, վկայեմ, ամբաստան լի-
 նիմ եւ այլ բայերի հետ:

Որոշ բայերի հետ, սակայն, աշխարհաբար
 ոչ միշտ է թարգմանուում մասին նա-
 խադրութեամբ: Այդ բայերն են՝ հոգամ,
 փոյթ ունիմ կամ փոյթ է ինձ, անփոյթ առ-
 նեմ: Սրանք գործածուում են նաեւ վասն
 նախադրութեամբ: Գոհ եմ, գոհանամ,
 խէթ ունիմ, տրտնջեմ, քրթմնջեմ եւ այլ
 բայերի հետ թարգմանուում է բացառա-
 կանով, իսկ խոստովան լիմիմ, յուրաստ
 կամ կամ յուրաստ լիմիմ, կաթոգին լիմիմ,
 թէեւ գործածուում են բացառականով,
 բայց թարգմանուում են հայցականով,
 սակայն միեւնոյն ժամանակ դրանց հա-
 մարժէք խոստովանիմ, ուրանամ սովորա-

բար հայցական լրացում են պահան-
 ջում նոյնիսկ զբարբարում:

Բոնել, կախել, կապել, քաշել իմաստներով
 բայերի հետ՝ ունիմ, բուռն հարկանեմ, առ-
 նում (բռնեմ), կախեմ, կապեմ, քարշեմ եւ
 այլն, որոնք աշխարհաբար թարգման-
 ւում են բացառականով:

Մի բանի համար կամ մի բան բերելու հա-
 մար երթալ կամ ուղարկել իմաստով:

Ինչպէս նկատուում ենք, այստեղ Հ. Պ.
 Գոճանեանը շեշտը դնում է աշխարհաբար
 թարգմանութեան զանազան եղանակների
 վրայ, որոնք նոր իմաստ չեն յաւելում
 տուեալ գործածութիւններին, քանի որ
 բացառութեամբ տեղի պարագայի իմաս-
 տով գործածութեան՝ բոլորը մնում են
 «մասին» նշանակութեան սահմաններից
 ներս, ընդ որում՝ այդ իմաստը թերեւս
 ստանում են բացառական հոլովի զօրու-
 թեամբ, այլ ոչ՝ ինքնին:

Հետաքրքիր է նաեւ լիմիմ ձեւերով
 բայերի առանձնաշատկութիւնը, որովհե-
 տեւ մեր կարծիքով՝ հնարաւոր է, որ
 տուեալ դէպքում գործ ունենք կրաւորա-
 կանի ենթակայական կամ ներգործող
 խնդիր բացառականի համաբանական ազ-
 դեցութեան հետ:

Ընդ նախդիր

Բացառական հոլովի հետ ընդ նախդի-
 րը կերտում է հետեւեալ իմաստները՝

Ընդ + բացառական = ներգոյականի իմաս-
 տով տեղի պարագայ: Սահմանափակ
 կիրառութիւն է: Օրինակ՝ Նստուցանել
 ընդ աջմէ իմմէ եւ ընդ ահեկէ ոչ է իմ տալ
 (Մկ Ժ 40); Նստէին, մի՛ ի սնարից, եւ մի՛
 յանոտից (ԹՎ Ի 12); Չոմն ընդ աջմէ եւ
 զոմն ընդ ձախմէ խաչեցին (Ղկ ԻԳ 33):
 Մեր կարծիքով՝ սովորական տեղի ել-
 ման պարագայ բացառական է՝ նշութա-
 ւորուած միեւնոյն «հետ/դէմ» նշանա-
 կութեամբ ընդ նախդրով, երբ գործո-
 ղութեան հոգեբանական մեկնակէտը
 պատկերացում, զետեղում կամ մնում

68 Հ. Պողոս Գոճանեան, Դասական գրաբարի
 գործնական քերականութիւն, Վիեննա-Երեւան,
 2011, էջ 183-184:

է ինչ-որ մեկուս: Սրա մեկնութիւնը կը տրուի սոյն յօդուածի «Նախդիրը Հայ-ցական Հոլովի Հետ» բաժնում:

«Գրաբարի գործնական դասընթաց» գրքում Մինասեանը նշում է նաեւ ընդ նախդրի կիրառութիւնը պատճառի իմաստով⁶⁹: Օրինակ՝ ընդ տկարութեանէ, ընդ ճեղ-գութեանէ ծուլութիւնից, ընդ դատարկ բանէն եւ այլն:

Հեղինակն իր «Հինգերորդ դարի գրա-բարի ուսանողական դասագիրք»⁷⁰ գրքում այս երկուսին աւելացնում է նաեւ ելման տեղի պարագայի իմաստով գործածութիւ-նը՝ Ընդ արեւելից կողմանէ գայ առ մեզ լոյսն; Ընդ հարաւոյ; Ընդ հիւսիսոյ կողմանէ եւ այլն: Մեր կարծիքով՝ սփուման «միջով, վրայով» նշանակութեամբ «միջով, վրայով» ընդ նախդրով յաւելաբար նշութաւորուած ել-ման բացառական է եւ իմաստով նման է ընդ + հայցական կառոյցին՝ շարժման սփուման նշանակութեամբ:

Գոճանեանը մէջբերում է նաեւ Երթայր մատ առ նա ընդ կողաց լերինն (Բ Թագ ԺԶ 13); Խաւսիմ ընդ դիմաց ձերոց (ձեր կողմից) օրինակներ⁷¹, ինչից եզրակացնում ենք, որ այս կիրառութիւնը վերաբերում է ոչ միայն դադարի, այլեւ շարժման բայերին: Իմաստով նոյնն է, ինչ եւ վերելի կէտում:

Ըստ Ասխրի

Բացառական Հոլովի Հետ ըստ նախ-դիրը կերտում է Հետեւեալ իմաստները՝

Ըստ «յետոյ» + բացառական = «մի բանից, մեկից յետոյ՝ այն կողմ»: Սահմանափակ կիրառութիւն է: Օրինակ՝ Մի ըստ միոջէ Ակարիցի իրաքանչիւր գլխովք (Ա Բզ 1); Եւ երկրորդն ըստ նմանէ կորնթացոցն է (Եւ 90): Մեր կարծիքով՝ սկզբնաւորման բա-

ցառականի կամ ելման բացառականի մասնաւոր դէպք է: Պարզապէս, եթէ սկզբնաւորման բացառականը մատնան-շում է մի վայրից ծագող եւ դուրս եկող երեւոյթ՝ անկախ ուղղուածութեան վեկ-տորից (ի մարդոյ մինչեւ յանասուն; կաղ յո-րովայնէ մար իւրոյ կամ յերկրէ յերկիր; ՅԵ-գիպտոսէ կոչեցից գորդի իմ եւ այլն), ա-պա այս դէպքում մտաւոր կամ Ֆիզի-կական «շարժման» վեկտորը միայն Հե-ռացող նշանակութիւն ունի:

Ըստ Մինասեանի՝ ներգոյականի ի-մաստով ըստ նախդիրը գործածուած է նաեւ տրական Հոլովի Հետ, սակայն բե-րուած բոլոր օրինակները յոգնակի տրա-կանով են, ուստի կարող են մեկնաբանել նաեւ իբրեւ ըստ «յետոյ» + բացառական, առաւել եւս, երբ իմաստով յարում են նոյն «մի բանից, մեկից յետոյ՝ այն կողմ» նշա-նակութեանը, ինչպէս՝ Հոգին սուրբ ըստ քա-ղաքաց քաղաքաց վկայէ ինձ (Գժ Ի 23):

Ի Ասխրի

Բացառական Հոլովի Հետ ի նախդիրը կերտում է Հետեւեալ իմաստները՝

Ի + բացառական = ելման սովորական բա-ցառական: Ի նախդիրը եզակի կամ յոգ-նակի բազմիմաստ բացառականի սովո-րական նախդիրն է: Օրինակ՝ Յիմէն թա-քուցանես (Գր 145); Իջոյց զսափորն յինքե-ան (Խն ԻԴ 46); Ի չգոյէ ի գոյ ած եւ եցոյց (Ա Թոռ 231); Որպէս եւ իսկ էր ի բնէ (Ա Թոռ 349); Կոտորեցաւ ի սայրասուր սուսե-րացն (Ա Թոռ 434):

Վ. Առաքելեանը, խօսելով գրաբա-րում բացառականի մասին, ելնում է այն մտքից, թէ «գրաբարի ոչ մի Հոլով նախ-դիր չունի»⁷², ուստի փորձելով մեկնաբա-նութիւն տալ այն Հանգամանքին, որ թանձր է վերջաւորութիւն ունենալով Հանդերձ՝ բացառականը նախդիր է պա-Հանջում իր գործառոյթը կատարելու Հա-

69 Մինասեան Մ., Գրաբարի գործնական դասըն-թաց, Անթիլիաս, 1976, էջ 196:
70 Մինասեան Մ., Հինգերորդ դարի գրաբարի ու-սանողական դասագիրք, Անթիլիաս, 2003, էջ 71:
71 Հ. Պօղոս Գոճանեան, Դասական գրաբարի գործնական քերականութիւն, էջ 175:

72 Առաքելեան Վ., Գրաբարի քերականութիւն, Ե-րեւան, 2010, էջ 206:

մար՝ յանգում է այն մտքին, թէ «բացառականը միայն այսօրուայ բացառականը չի եղել: Նա ունեցել է նաեւ գործիականի ու ներգոյականի իմաստներ, ինչպէս Հնդեւերոպական միւս լեզուների աբլատիւտսներն ունեն. «Ձայնք պաշտաւնէիցն ի տուէ եւ ի գիշերի անհատ էին» (Եղ 68)» եւ յաւելում. «աբլատիւտսային այդ նշանակութիւններն արտայայտուում էին նախդիրային կապերով... Յետագայում աբլատիւտսային նշանակութիւնները, բացի բացառականից, մթազնուել են, բացառականի նշանակութիւնն առանձնացել եւ դարձել է աւելի բացայայտ, իբրեւ բացառականի մնայուն նախդիրի՝ առանց որեւէ նշանակութեան: Սա, թերեւս, մնացել է ա եւ ո Հոլովման եզակի եւ ամբողջ Հոլովման յոգնակի սեռականից ու տրականից բացառականը զանազանելու համար, որովհետեւ յիշեալ ձեւերում սեռականն ու տրականը նմանուում են բացառականին, տարբերում են միայն ի նախդրով: Հէնց սա է պատճառը, որ դրաբարի բացառականը նախդիրաւոր է եւ առնում է գրեթէ բոլոր նախդիրները, բացի ց-ից, իսկ ինչ ի նախդիրին է վերաբերում, այն բացառականի մշտական ուղեկիցն է: Գրաբարի բացառականը հազուադէպ ի նախդիրը չի առնում: Դա բացատրուում է ինչ-որ մասնակի գործածութեամբ, եւ մասամբ՝ ձեռագրերում պատահական բացթողումներով»:

Ինչպէս տեսնում ենք, հեղինակը հին հայերէնում վերականգնում է աբլատիւտսային նշանակութեամբ բացառական միացնելով դրան նաեւ գործիական ու ներգոյական Հոլովները: Ներգոյականի հարցը առայժմ մի կողմ թողնելով՝ նշենք, որ մեզ համար միանգամայն անհասկանալի է հին հայերէնում գործիականի նշանակութեամբ աբլատիւտսի վերականգնում այն պարագայում, երբ Հնդեւերոպական միասնութեան շրջանից ի վեր հայերէնը ոչ մի թեք Հոլով չի պահպանել Հնչիւնային եւ իմաստային այնպիսի անաղարտու-

թեամբ, ինչպէս գործիականը⁷³: Ի դէպ, պարզ չէ նաեւ, թէ կոնկրետ ո՞ր տրամաբանութիւնից է ինքնըստինքեան բխում, որ բացառականը ց նախդիր չի առնում:

Վ. Առաքելեանը լատիներէնի աբլատիւտսի՝ նախդրիւ գործիական իմաստը մեխանիկօրէն տարածել է հայերէնի վրայ՝ առանց հաշուի առնելու, որ դրա գործառական անհրաժեշտութիւնը լեզուի որեւէ փուլում չի զգացուել, իսկ բացառականի կիրառութիւններից եւ ոչ մեկում այդպիսի նշանակութիւն, նոյնիսկ իբրեւ արխարգմ, չունենք պահպանուած (բացառականի՝ իբրեւ գործիական կիրառութիւնները նոյնքան մեկնաբանելի են ծագման/սերման բացառականով), եւ սա՝ այն դէպքում, երբ հայերէնի Հոլովման համակարգն ու նախդիրների գործածութեան առանձնայատկութիւնները թոյլ են տալիս նշմարել եւ նոյնիսկ վերականգնել արխարգմների ու նորաբանութիւնների փոխներգործութեան բաւականին հետաքրքիր շերտեր: Ի դէպ, գործիականի անխախտ տեղը հայերէնի Հոլովման համակարգում մեզ թոյլ է տուել կատարել է մի ուշագրաւ նկատառում, որի մասին կը խօսուի ստորեւ՝ հայցական Հոլովի հետ նախդիրների կիրառութեան որոշ առանձնայատկութիւններին անդրադառնալիս:

Նոյնքան կասկածելի է թւում նաեւ ներգոյականի իմաստով բացառական ենթադրելը, ինչին յապացոյց հեղինակը մէջբերում է ի տուէ ձեւը: Հարցը բաւականաչափ քննարկուել է⁷⁴, սակայն առանց վերջնարդիւնքի: Մեկնաբանութեան նպատակով հակուած ենք ընդունելի համարելու Վ. Պետրոսեանի կարծիքը հայերէնում բացառական Հոլովի առաջացման մասին, ըստ որի՝ դրա ի նախդիրն ի յայտ է եկել ներգոյականի ի նախդրի համաբանու-

73 Անտուան Մէյե, 62. աշխ., էջ 350:
 74 Միմաստեան Մ., Հայերէնագիտական ուսումնասիրություններ, Ժնև, 1991, էջ 373:

թեամբ՝ տարբերակելու համար յոգնակիտում ներգոյական եւ բացառական հոլովները, երբ սեռականն արտամղել էր հին տրականը, իսկ տրականը՝ հին բացառականը, ինչի արդիւնքում նախդիրը տարածուել է տեղային նշանակութիւնից, ինչից յետոյ բացառականի հոլովական վերջաւորութիւնը մտքին հաղորդել է ելման/անջատման երանգ⁷⁵:

Երբեւէ չյաւակնելով հանդերձ վերջնականութեան՝ փորձենք հիմնաւորել, որ այս մեկնաբանութիւնը բացատրելի է դարձնում նաեւ ի տուէ ձեւը՝ որպէս ներգոյական, սակայն ոչ բացառականի -է վերջաւորութեամբ: Ինչպէս գիտենք, տիւ բառը գրաբարի անկանոն հոլովման բառերից է եւ սեռական-տրականում ձեռք է բերում տու(ըն)ջեան ձեւը, որից բացառականում ձեւաւորում է ի տու(ըն)ջեան տարբերակը: Բառի հնութիւնն ու անկանոնութիւնն ինքնին ակնարկում են խօսքում դրա յաճախադիպութեան մասին, ինչից հնարաւոր է եզրակացնել նաեւ, որ զրոյ հիմքով անբուն այս արմատի թեք տուանդրադարձը կարող էր պահպանել նաեւ մեկ այլ հոլովական վերջաւորութիւն, այն է՝ հնդեւրոպական տրականի *-ei/*-oi հին վերջաւորութիւնը, որի առաջին անդամը հնագոյն փուլում մեզ կը տար -է՝ կազմելով ի տուէ ներգոյականը: Յետագայում համաբանութիւնը փոխարինեց սա ի տու(ըն)ջեան տարբերակով (նոր տրականից), որի կողքին, սակայն, պահպանուեց նաեւ աւելի հին՝ ի տուէ ձեւը:

Լինելով սակայն լեզուի ներքին վերականգնման ջատագով՝ մենք առաւելապէս հակուած ենք այլ մեկնաբանութեան՝ նկատելով, որ նմանօրինակ կիրառութիւններում գերազանցապէս ժամանականիչ բառեր են (ի տուէ, յայգուէ եւ այլք), ընդ որում՝ կայուն բառակապակցութիւններում՝

ի տուէ եւ ի գիշերի, յայգուէ եւ երեկոյն, ինչը թերեւս ցոյց է տալիս, որ սրանք սովորական բացառականից ծագած պատկերաւոր խօսքեր են, որոնք ցոյց են տալիս ժամանակի տեւողութիւն՝ սկզբից մինչեւ որեւէ ժամանակ (յառաւառէ միգնէ յերեկոյ), կամ այդ ժամանակահատուածը ներառյալ (ի տուէ եւ ի գիշերի): Իսկ քանի որ բնական խօսքում օրուայ փոխարէն յաճախ կարող էր կիրառուել նաեւ ի տուէ ձեւը՝ մատնանշելով լուսանալուց մինչեւ մթնելն ընկած ամբողջ ժամանակահատուածը, ապա դրա կիրառութիւնը արդ կամ ցերեկ (որն, ի դէպ, եւս նախածանցաւոր է եւ նշանակում է «մինչ երեկոյ») բառերի փոխարէն միանգամայն օրինաչափ է լեզուամտածողութեան տեսանկիւնից, եւ, ուստի, բոլորովին կարիք չկայ արդի հայերէնի մտածողութեամբ «ներգոյական» ընկալուող այդ բառաձեւերը մեկնաբանելու համար ներմուծել հայերէնում չգոյ աբլատիւսային բացառական:

Այսպիսով, բերուած ակնարկը ցոյց է տալիս, որ բացառականի հետ կիրառուող նախդիրները ոչ թէ յաւելադրութիւն են, այլ կարեւոր նրբերանգներ են հաղորդում բացառական հոլովին ներյատուկ նշանակութիւններին եւ ցուցաբերում են միեւնոյն հասկացական յարաբերութիւնները, ինչ եւ կացական հոլովի հետ համադրուելիս:

Նախնական եզրակացութիւն

Ըստ այդմ՝ կարող ենք արդ փոքրիչատէ յստակեցնել նախդիրներով ձեւաւորուող գլխաւոր հասկացական-տրամաբանական յարաբերութիւնները՝ բնորոշելով իբրեւ մասնաւորութիւն (զ), մերձկացութիւն (առ), անդրկացութիւն (ըստ), ընթերակացութիւն (ընդ), ներկացութիւն (ի), մինչկացութիւն (ց):

Այժմ տեսնենք, թէ ինչ նոր բառային եւ քերականական իմաստներ են ի յայտ

75 Պետրոսեան Վ., Հին հայերէնի բացառական հոլովի վերջաւորութիւնների ծագումը, էջ 32:

բերում միևս հոլովներով նախդիրների կիրառութեան օրինաչափութիւնները:

Նախդիրը գործիական հոլովի հետ

Դասական հայերէնում գործիական հոլովը դրսեւորում է առաջին հերթին միջոցի/ձեւի/հիմունքի յատկանիշներ՝ գործածուելով իբրեւ ածականի կամ բայի միջոցի անուղղակի խնդիր եւ զանազան իմաստներով պարագայ՝ պատասխանելով «ինչո՞վ», «ի՞նչ/ո՞ր միջոցով/ձեւով/չափով/տեղով» իմաստային փնջի հարցերին: Հանդիպում է նաեւ իբրեւ ժամանակի պարագայ՝ մօտենալով չափի պարագայի իմաստին, ինչպէս, օրինակ՝ Բագում ամառ զհամբերութիւն յանձն իւր կրէր (Ագ 156)՝ «բազում տարիների չափով > բազում տարիներով»; Երեւեցաւ ատորքք բազմաք այնոցիկ (Գժ ԺԳ 30)՝ «բազում օրերի չափով» եւ այլն:

Կիրառուում է առ, գ եւ ընդ նախդիրների հետ՝ արտայայտելով ներքոբերեալ իմաստները: Շարադրանքն այլեւս չծանրաբեռնելու նկատառմամբ՝ մեր մեկնաբանութիւնները տալիս ենք օրինակներին առընթեր:

Առ նախդիր

Գործիական հոլովի հետ առ նախդիրը կերտում է հետեւեալ իմաստները՝

Առ («ժամանակ, օրօք») + գործիական = ժամանակի պարագայ՝ «ե՞րբ» հարցին ի պատասխան: Օրինակ՝ Առ Եգեկիաւ ասէ (Եզն 2213); Առ Սերուքաւ եղև, ը ասեմ, ը սկիզբն հեթանոսսութեան (Եզն 2411-12); Որպէս առ ջրհեղեղան ասէ (Եզն 1794): Մեր կարծիքով՝ ժամանակի պարագայի մասնաւոր դէպք է՝ կրկին «մօտ» իմաստի շեշտմամբ: Առհասարակ, հարկ է նշել, որ ժամանակի պարագայի իմաստ գրաբարում հազորդուում է ոչ թէ ինքնին հոլովի կառավարմամբ, այլ՝ հոլովառու բառի ժամանակային յատկանիշի (յայնմ ժամանակի; ի միջաւրէի; ի գիշերի; ընդ առաւատն; ըստ այն մի գիշեր): Ի

դէպ, ըստ երեւութի՝ սա է պատճառը, որ բայանուան եւ անորոշ դերբայի հետ տարբեր նախդիրների կիրառութիւնը շեշտում է բայ խօսքի մասին ներյատուկ «պրոցեսի» ժամանակային-տեղական իսկ կողմը (Յելանելն Աորա յարտաքս; Ի տալ զհրամանսն; Ընդ ծագել արեգակսն): Քանի որ գործիական հոլովը շեշտում է գոյականի անուան «չափական» կողմը (տուեալ դէպքում՝ ժամանակը), այս նախդրով կիրառութիւնը շեշտում է այդ առանցքի մօտաւոր յատկանիշը՝ վերը ձեւակերպուած մերձկացութեան յարաբերութեամբ:

Առ «մօտ» + գործիական = մօտաւոր տեղի պարագայ՝ «որտե՞ղ(ով)» հարցին ի պատասխան: Օրինակ՝ Եկին ի գետն Դկղաթ եւ հանգեան առ ափամբն (Տոզ Զ 1); Տարածաներ... մինչեւ առ Մծբին քաղաքաւ (Ագ 439-440); Արածէին... առ եգերք գետոյն (Ծն ԽԱ 3); [Արեգակն] ծագեալ անդ՝ գնալ առ հարաւով եւ պատի առ հիւսիսեալ... ցերեկ առ հարաւակողմամբ գնալ ընդ արեւմուտս եւ զցայգ առ հիւսիսեալ դառնայ յարեւելս (Եզն 2216-17): Ինչպէս եւ վերը, այստեղ եւս կարծում ենք, որ գործիականութիւնն ընդհանուր առմամբ շեշտում է տեղի պարագայի «չափական» իմաստը՝ տարածականօրէն ձգելով-ընդլայնելով, ինչով եւ տարբերուում է, օրինակ կացական հոլովի նշանակութիւնից, որն աւելի կոնկրետ դիրք է մատնանշում՝ Առ ափին ծովու «ծովի ափի մօտ»:

Առ + գործիական = բայական գործիական խնդիր կամ դարձուածք: Օրինակ՝ առ այսաք արար կախարդելով զմեզ (Ա Վկ 720)՝ «աճալարարութիւն արեց՝ մեզ կախարդելով»: Ըստ ամենայնի՝ դարձուածքի իմաստն է այքերի մօտով ինչոր բան անցկացնելը:

Առ «համեմատութեամբ» + գործիական = վերաբերութեան անուղղակի խնդիր: Ինչպէս նշում է Մինասեանը՝ «մօտ» իմաստի վերացական է: Օրինակ՝ Իբրեւ զմծիխ մի եւ առ Աորաք (Ա Թոռ 137):

Ձ Ասխդիր

Գործիական հոլովի հետ *զ* նախդիրը կերտում է «շուրջ» իմաստը եւ հնում կոչուել է պարառական հոլով:

Ձ- «մօտ, շուրջ» + գործիական = մօտաւոր ժամանակի պարագայ: Օրինակ՝ Զհասարակ գիշերաւ ես մտից ի մէջ Եգիպտոսի (ԵԼք ԺԱ 4); Զինն ժաման գոչեաց Յիսուս (ՄԹ Իէ 46); Ելեալ գերորդ ժամն՝ ետես ալլա (ՄԹ Ի 3): Կրկին՝ գործ ունենք ժամանականիշ բառերի պատճառով ձեւաւորուող՝ ժամանակի պարագայի հետ, որը երկրորդային յատկանիշ է: Ձ նախդիրը տուեալ դէպքում միայն որոշեալութիւն-կոնկրետութիւն-մասնաւորում է ներմուծում, այլ ոչ՝ «մօտ» իմաստ, որը պարզապէս շարահիւսական համանիշ է արդի հայերէնի տեսանկիւնից:

Ձ- «շուրջ, վրայ» + գործիական = մօտաւոր կամ շրջանակի տեղի պարագայ: Նախդրային բառակապակցութիւնը կարող է լինել բուն կամ վերացական իմաստով, դարձուածք, «զգուշանալ, ծաղրել» եւ այլ իմաստով որոշ բայերի իւրայատուկ խնդիրը: Օրինակ՝ Դարձեալ ածէր զմտաւ զպարկեշտ վարս քրիստոնէից (Բ ՎԿ 541)՝ միտքը պատկերանում է իբրեւ աւելի լայն մի տեղ, որի շուրջ կարելի է յիշողութիւն պտտել; Անկաւ զպարանոցաւն նորա եւ համբուրեաց զնա (ՂԿ ԺԵ 20); Մեր կարծիքով՝ *զ* նախդիրը կատարում է պարզապէս որոշեալութեան գործառոյթ, իսկ «շուրջ» իմաստը ձեւաւորում է գործիականով արտայայտուող «չափական» յատկութեան ընդլայնման արդիւնքում՝ պարանոցը խօսողի մտքում ձեռք է բերում պարագիծ, իսկ *զ* նախդիրն ապա մասնաւորում-շրջառում-լրացնում է այդ շրջանակը; Զբազում բերդաք զանց առնէին, զի ոչ կարէին մարտնչել ընդ ամուրսն (Բզ 150)՝ կրկին՝ բերդերը ձեռք են բերում տարածական չափ, եւ զանց առնելու գործողութիւնը կատարում է նրանց բոլոր կողմերից շրջանցելով; Ծագեաց արեւ զամենայնի

(Վեց 130) եւ այլն: Կազմում է բազմաթիւ դարձուածքներ եւ ոճեր, որոնք բոլորը մեկ առ մեկ չենք քննի այլեւս:

Ինչպէս տեսնում ենք, գործիական հոլովի հաղորդած մասնաւոր իմաստից ազդուելով՝ *զ* նախդիրով կազմութիւնները ձեռք են բերում առարկան կամ երեւոյթն ամբողջովին (սաստկապէս) շրջապատելու մտովի կամ տարածակնօրէն պարառելու իմաստ, քանի որ կառավարուող անդամը անորոշ/անկարեւոր սահմաններով առարկայից վերածւում է տարածական սահմաններով առարկայի: Հասկանալի է, ուստի, որ այս կիրառութիւնը տարբերում է առ + գործիական կառոյցով արտայայտուող մասնակիօրէն երիզող իմաստից՝ պայմանաւորուած առ նախդրի «մօտ» իմաստով: Այսինքն՝ երթամ առ տամբ եւ երթամ զտամբ կը նշանակեն, համապատասխանաբար, քայլում եմ տան մօտով եւ քայլում եմ տան շուրջ: Պարառող իմաստն առաւել չափով են շեշտում նաեւ որոշ բայեր: Օրինակ՝ հեղում, արկանեմ, անկանիմ, կապեմ եւ բազում այլ բայերի հետ սկզբունքօրէն կարելի է ունենալ նաեւ ի վերայ + սեռական, *զ* + բացառական, *ի* + բացառական, առ + կացական, ընդ + գործիական եւ այլ կազմութիւններով անուղղակի խնդիրներ, սակայն դրանց հաղորդած նրբիմաստները տարբերուելու են միմեանցից⁷⁶, ինչպէս, օրինակ՝ կապեմ զտամբ (կապում եմ տան շուրջ), կապեմ զտանէ (կապում եմ որոշակի տնից / ամբողջութեամբ վերցրած տնից), կապեմ ի տանէ (կապում եմ տնից /

76 Աւելին՝ դրանք սխալ կամ փոխմիփոխ կիրառութեան արդիւնք եւս չեն, ինչպէս որոշ հեղինակներ փորձում են պնդել համակարգելիս: Այս ամսմամբ ուշագրաւ է Վ. Քոսեանի «Գրաբարի բանականակցութիւնները» աշխատութիւնը, որում շատ են նախդիրների իմաստային դաշտերը չգանազանելու եւ նրբութիւնները զանց առնելու հետեւանքով թե՛ սխալ յորջորջուած կիրառութիւնները, թե՛ իմաստների անտեղի վերագրումները, թե՛ նախդիրների համանիշ կարծուած կիրառութիւնները:

տան միջից / տան վրայից), կապեմ ի վերայ տան (կապում եմ տան վրայ), կապեմ առ տան (կապում եմ տան մօտ), կապեմ ընդ տամբ (կապում եմ տան տակ) եւ այլն: Պարզ է, ուստի, որ նախդիրների՝ ինքնուրոյն իմաստների մթազնածուլթեան մասին պնդումներն ու դատողութիւնները բնաւ չեն դիմանում քննադատութեանը:

Միանգամայն բացատրելի են նաեւ զանազան դարձուածքները, որոնցով հարուստ է գրաբարը: Իբրեւ օրինակ՝ վերլուծենք զմիմեամբք ելանել դարձուածքը: Միմեանց-ը փոխադարձ դերանունն է, հետեւաբար պահանջում է երկու ազենտ, որոնցից իւրաքանչիւրը գործողութիւնը տեղափոխում է միւսի վրայ, ուստի զմիմեամբք ձեւը ելանել բայի հետ կը նշանակի, որ ազենտներից իւրաքանչիւրը, պարառող գործողութիւն կատարելով, ելնում է դիմացինի նկատմամբ աւելի բարձր դիրքի: Այստեղից՝ «միմեանց հետ մրցել եւ գերացանցել» իմաստները: Կամ՝ անցանել զաւուրք կը նշանակի շրջանցել, գերազանցել բոլոր տարիները՝ միասին վերցրած (այսինքն՝ կեանքին յատկացուած բոլոր տարիները), ուստի հաղորդում է ոչ թէ պարզապէս ծերանալու, այլ զառամելու իմաստը: Օրինակները բազմաթիւ են:

Ընդ նախդիր

Գործիական հոլովի հետ ընդ նախդիրը կերտում է հետեւեալ իմաստները՝

Ընդ «չուրջ» + գործիական = մօտաւոր ժամանակի պարագայ: Օրինակ՝ Ընդ այնու ժամանակաւ ասէ Տէր ցՅեսու (Յես Ե 2): Սահմանափակ կիրառութիւն է:

Ընդ «տակ» + գործիական = ներգոյական տեղի պարագայ՝ նիւթական կամ բուն իմաստով: Օրինակ՝ Նա կայր առաջի անցա ընդ ծառով (Ծն ԺԸ 8); Ծածկեաց ընդ առագով (Ելք Բ 12):

Ընդ «տակ» + գործիական = ներգոյական տեղի պարագայ՝ իրաւական կամ վերացական իմաստով: Օրինակ՝ Ընդ ապակա-

նութեամբք եմ իրք աշխարհիս (Բ Թոռ 9); Ընդ միով թագաւորութեամբ եմ (Բ Մկր ԺԱ 23): Նախորդ դէպքի տրամաբանական շարունակութիւնն է:

Ընդ «տակ» + գործիական = ուղեւորման հայցական տեղի պարագայ: Նիւթական կամ փոխաբերական/վերացական իմաստով: Օրինակ՝ Մտանել ընդ ապաշխարութեամբ (Եզն 3386); Թեպէտ... ընդ մահուամբ անկանացի (Եզն 851-852); Արկանել ընդ վնասիւք զանմեղն (Եզն 692); Ընդ ապականութեան պատժաւք արկանել (Մեկ 29, 395-396):

Ինչպէս նկատում ենք, այս դէպքում ընդ նախդրի իմաստներին աւելանում է եւս մեկը՝ «տակ» նշանակութիւնը, ինչն ունի բացատրութիւն: Խօսելով ընդ նախդրի ծագման մասին՝ հնդեւրոպաբանները նկատել են, որ դեռեւս վաղնջահայերէնի փուլում նոյնացել են հ.-ե. *anti «դիմաց», «առջեւ» եւ *ndhos «տակ» բառերը՝ յանգեցնելով վ.-հ. *andi- (*andi-?) ձեւին, որից եւ առաջացել է հայեէնի ընդ-, հագուադէպ՝ ընտ-՝ դ-ի եւ տ-ի շփոթութեամբ (ձայնաւորներից առաջ), ըմ- (չրթնային բաղաձայններից առաջ) եւ ըն- (այլ բաղաձայններից առաջ) տարբերակը: Ուստիեւ, որպէս նախդիր այն արտայայտում է ե՛ւ հաւանաբար հ.-ե. *anti-ից եկող («դիմաց, փոխարէն», «հետ, միասին»), ե՛ւ *ndhos-ից («տակ») եկող իմաստները՝ վերջինս մասնաւորապէս գործիական հոլովով⁷⁷:

[Ի նախդիր]

Գերհագուադէպ, նկատում են գործիականի հետ ի նախդրի կիրառութեան դէպքեր⁷⁸, ինչպէս՝ Տիրէր յԱրոյեարայ միմչեւ ցճորն Առնովնայ յեզերք ճորոյն (Յես ԺԲ 2), Բնակէ անդրէն ի անյն գետեզերքն (Խոր Ա 2),

77 Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 244; Անտուան Մեյե, նշ. աշխ., էջ 143, 170:
78 Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի, Հայերէն քերականութիւն, էջ 102:

Ընդարձակեցեր զգնացս իմ ի ստորեւ իմով (Սաղ ԺԷ 37, Զոհրապեան 1805) եւ այլն, որոնք թերեւս զբնագրական սխալներ են (ինչպէս, հաւանական է, բնակելովն յինքնամբ աստուծով հատուածը), սակայն կարող են մատնացոյց անել նաեւ գործիական հոլովի՝ վերը նկարագրուած չափական առանձնայատկութեամբ պայմանաւորուած՝ ի «մէջ» նախդրի տրամաբանական ներկացական իմաստի ընդլայնման փաստը, ինչպէս ի ստորեւ իմով օրինակում ստացական դերանունն. համաձայնեցումը ցոյց է տալիս գործիական հոլով, այլ ոչ՝ ստորեւ մակբայի կիրառութիւն (եթէ բացառենք վրիպակ լինելը, ինչն, անշուշտ, թէական է):

Նախդիրը հայցական հոլովի հետ

Դասական հայերէնը, լինելով նոմինատիւ կառոյցի լեզու, հայցական հոլովին է վերապահում ներգործական սեռի բայի ուղիղ խնդիր կազմելու գործառոյթը⁷⁹: Պատմական զարգացման ընթացքում հոլովի քերականական կարգ ունեցող բոլոր խօսքի մասերում (եւ եւ դու դերանուններից բացի) եզակի հայցականի վերջաւորութեան անհետացման⁸⁰ եւ ուղղականին նոյնանալու պատճառով հայցական հոլովն ըստ հարկի պահանջել եւ ձեռք է բերել որոշեալութիւնը (ռեֆերենտութիւնը) նշութաւորելու նոր միջոց, ինչն իրականացուել է մասնաւորիչ զ նախդրով, որի ընդհանուր բառային իմաստին մեր կարծիքով ամենից մօտ է «իսկ» բառը՝ «այս իսկ», «ի մասնաւորի», «մասնաւորապէս» սաստկական նշանակութեամբ⁸¹, ինչում կարելի է համոզուել վերոնշեալ եւ ներքոբերեալ բազում օրինակներից:

Հայցականը գրաբարում իրացում է նաեւ իբրեւ ստորոգելիական վերադիր, ներգործական բայերի երկրորդային ուղիղ խնդիր, շարժման բայերի տեղի պարագայ (ի տարբերութիւն կացական՝ դադարի վիճակի տեղի պարագայի), արտայայտում է ժամանակի տեւողութիւն, տարածական տեւողութիւն, չափ եւ քանակ (քանական ածական որոշչով), ինչպէս նաեւ գործիականի արտայայտման միջոց է (ի ձեռն, ի ձայն, յանուն եւ այլն, որոնց մասին՝ առանձին, վերջում): Գործածւում է բոլոր նախդիրների հետ եւ այս առմամբ ամենից լայնօրէն կիրառուող հոլովն է՝ ուղղականից զատ: Քանի որ այս հոլովին առնչուող բազմաթիւ հարցեր արդէն իսկ քննարկուել են վերը, ստորեւ կը սահմանափակուենք միայն համառօտ մէջբերումներով եւ անհրաժեշտ մեկնաբանութիւններով:

Առ նախդիր

Հայցական հոլովի հետ առ նախդիրը կերտում է հետեւեալ իմաստները՝

Առ + հայցական = անուղղակի խնդիր կամ տրականի իմաստ: Օրինակ՝ Արա առ իս զգութ մարդասէր շնորհաց քոց (Ագ 50); Առ Իսրայէլ աւէ (Հռ Ժ 21); Եկաց յաղաթս Արրահամ առ Աստուած (Մն Ի 17): Նոյնն է, ինչ ուղեւորման հայցականը:

Առ + հայցական = ժամանակի պարագայ: Պատասխանում է «ե՞րբ» հարցին: Օրինակ՝ Առ այն ար պահել հրամայեաց (Ագ 30); Առ այն ժամանակ մի խաղաղացաւ երկիրս Հայոց (Բգ 29); Այլ առ ժամանակն ոչ վասն այնորիկ ինչ էր բարբառն (Մեկ 101. 116-117): Հարցը քննարկուել է ժամանականիչ բառերի առնչութեամբ:

Առ «յետոյ» + հայցական = յաջորդականութիւն, բաշխականութիւն: Գոյականը սովորաբար կրկնուած է: Օրինակ՝ Առ սակաւ սակաւ աճէ (եգն 2349); Գունդ առ գունդ ճակատել ոչ առնուին յանձն (Ագ 26): Փողք առ փողս գոչեցին (Ագ 327): Միեւ-

79 Անտուան Մէյե, Գ2. աշխ., էջ 143, 353:
 80 Նոյն տեղում, էջ 261:
 81 Հմմտ. հնդեւրոպական *g^(h)i, *g^(h)e, *g^(h)o արմատներից ծագող ձեւերի իմաստային փնջերը քոյր լեզուներում:

նոյն «մօտ» իմաստի տրամաբանական ընդլայնումն է, «յետոյ»-ն միայն արդի հայերէն թարգմանութեան միջոցն է:

Առ «մօտ» + յոգնակի հայցական եւ ուղիղ խնդրով՝ ունիմ (կալայ), համարիմ բայերի հետ: Նշանակում է «համարել»: Օրինակ՝ Չոր առ աստուածսն ունիմ, անարգեմ շատք եւ անպատուեմ (Եզն 132-133); Առ իրաւագէտս ունիմ [զքեզ] (Եզն 697-698); Մի՛ ունիր զանձո՛ր առ աւագս (ԱԹոռ 139); Սովոր եմ ... զքաջս առ դիւցազունս ունել (Եզն 1410-11): Մերձստեղային իմաստով կացական հոլովի իմաստի ընդլայնումն է: Բայիմաստից ելնելով հանդիպում է միայն յոգնակի հայցականով, քանի որ գոյականների որոշակի կարգ է բնորոշում:

Առ (ի) + կացական = պատճառի/նպատակի պարագայ: Օրինակ՝ Մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ աւգտակար է (Ա Տմ Դ 8); Առ սէր քո արարի զկամս քո ի վերայ Բաբելոնի (Ես ԽԸ 14): Հարցը քննարկուել է վերը՝ կացական եւ բացառական հոլովների առնչութեամբ:

Առ «մօտ» + անձի անուն հայցական = ուղեւորման հայցական/տրական: Արտայայտում է տեղափոխութիւն: Օրինակ՝ Յդեգէքո՛ր առ իս (Բզ 30); Դարձեալ առաքեցես առ մեզ (Ագ 52):

Առ «մօտ» + կացական = ներգոյական տեղի պարագայ: Հարցը քննարկուել է վերը՝ կացական հոլովի առնչութեամբ:

Առ «հանդէպ» + հայցական = վերաբերութեան խնդիր: Օրինակ՝ Պահանջեաց սէր առ միմեանս (Ագ 314); Ոչ կարացիմ տալ մնա պատասխանի առ այն (Ղկ ԺԴ 6):

Առ + հայցական = ձեւի պարագայ կամ գործիականի իմաստ: Օրինակ՝ Մարդիկ եւ անասուն առ հասարակ սատակիցին (Եզն 1924):

Այսպիսով, տեսնում ենք, որ առ նախդրի նշանակութիւնները շարունակում են մնալ մերձկացական յարաբերութեան իմաստի սահմաններում եւ տեղային նշա-

նակութեամբ ձեւաւորում երկու տիպ: Հայցական հոլովով կազմում են ուղեւորման մերձաւոր տեղի պարագայ, կացական հոլովով՝ դադարի մերձաւոր տեղի պարագայ: Սա նման է ի նախդրով ձեւաւորուող կաղապարին, որտեղ ունենք ուղեւորման տեղի պարագայ հայցական եւ դադարի տեղի պարագայ ներգոյական:

Զ Ասխորի

Հայցական հոլովի հետ գ նախդիրը կերտում է հետեւեալ իմաստները՝

Զ + անորոշ հայցական = որոշեալ հայցական: Ամենից տարածուած կիրառութիւնն է: Կը բնորոշենք որպէս մասնատրման իմաստի քերականացման արդիւնքում ձեռք բերած որոշեալութեան յարաբերութիւն:

Զ + անորոշ հայցական = ձեւի պարագայ գործիականի իմաստով: Օրինակ՝ Պատմե՛մ զայս ձեւ արինակ (Ա Թոռ 345); Զնոյն արինակ վտանգէին (Ա Թոռ 389): Ընդգրկուել է որոշեալութեան յարաբերութիւնների դաշտում: Զեւի պարագայ իմաստը նախդրով չի կերտուում, այլ ձեռք է բերում ձեւ եւ աւրինակ բառերի ներգործութեամբ:

Ըստ Ասխորի

Հայցական հոլովի հետ ըստ նախդիրը կերտում է հետեւեալ իմաստները՝

Ըստ «այն կողմ, դուրս» + հայցական = ուղեւորման կամ դադարի տեղի պարագայ: Օրինակ՝ Ըստ այն մի գիշեր՝ այլ ոչ եմուտ առ կինն իւր (Ա Բզ 10); Ըստ երկիր, անդր, ոչինչ է (Եզն 2560): Մեր կարծիքով՝ կացականի մասնաւոր դէպք՝ անդրկացական նշանակութեամբ: Հագուողէպ կիրառութիւն է, հնարաւոր է շարժման եւ դադարի պարագաների խառնաշփոթ՝ ըստ նախդրի սակաւ գործածութեան պատճառով, ինչպէս քննարկուել է վերը՝ կացական հոլովի առնչութեամբ: Իբրեւ ուղեւորման տեղի պարագայ՝ յաճախ է կիրառուում ան-

կանիմ, անցանեմ, անցուցանեմ, ելանեմ, հանեմ *բայերի հետ: Օրինակ՝* Տեսանէր, զի ըստ ակն անկանէին (*Բզ 200*); Անցուցին ըստ Տափերն կամուրջ (*Ա Բզ 146*); Ոչ ըստ ամուրս ելանեմք (*Ա Մկբ Բ 34*); Իբրեւ ելին ըստ քաղաքն (*Ծն ԽԴ 4*); ելեալ ըստ չափ «տարիքն առած»: Ուղեւորման պարագայի իմաստ ստանում է բայիմաստի ներգործութեամբ:

Ըստ «Համեմատ» + հայցական = Համեմատութեան կամ Համաձայնութեան պարագայ: *Օրինակ՝* Ըստ արարչին հրամայելն բուսանին (*Ագ 332*): Քննարկուել է կացական հոլովի առնչութեամբ:

Բոլոր օրինակները ցոյց են տալիս անդրկացական յարաբերութիւն՝ ոչինչ չյաւելելով սահմանուած պատկերին:

Ի Ասխարհի

Հայցական հոլովի հետ ի նախդիրը կերտում է հետեւեալ իմաստները՝

Ի + հայցական = տեղի/ժամանակի ներգոյական պարագայ: *Կացական հոլովի մասնաւոր դէպք, որի կիրառութիւնն ամենայնաձայն է: Առնում է նաեւ անորոշ դերբայ: Քննարկուել է վերը՝ կացական հոլովի առնչութեամբ:*

Ի + եզակի/յոգնակի հայցական = ուղեւորման տեղի պարագայ: *Ընդհանուր (չմասնաւորեցուած) վեկտորով ուղեւորման տեղի պարագան է: Որոշ բայերի (անխայեմ, գթամ, դատապարտեմ, դառնամ, դարձուցանեմ, երդնում, խոստովանիմ, հայիմ, հաւատամ եւ այլն) հետ կազմում է փոխաբերական իմաստով ուղեւորման տեղի պարագայ: Կազմում է նոյն իմաստով ստորոգելիական վերադիր՝ վերածուելու, դառնալու, լինելու, փոխուելու եւ այլ իմաստներով՝ իբրեւ վերջնարդիւնք կամ նպատակ՝ Եղիցի ինձ ի տուն (*Մեկ 79-884*):*

Ի + անորոշ դերբայ = գոյական անորոշ դերբայի ներգոյական: *Օրինակ՝* Նաւն ի վտանգի կաշր, ի խորտակել (*Յվն Ա 4*); Ոչ եթե յՈրմզդի կամ ի յագելն էր գարութիւնն

(*Եզն 1587*): *Ժամանակի պարագայի մասնաւոր դէպք է: Մեր կարծիքով՝ դադարի վիճակի այս ներգոյականը բայիմաստի ածանցեալ է:*

Ի «Համար» + հայցական = նպատակի պարագայ: *Ուղեւորման տեղի պարագայի ածանցեալ նշանակութիւնն է: Գործածուում է գերազանցապէս անորոշ դերբայի եւ բայանուան հետ:*

Ի + հայցական = բայական յատուկ անուղղակի խնդիր: *Ուղեւորման հայցականի տարբերակ է, որ կազմում է նաեւ դարձուածքներ: Օրինակ՝* Ած գնա ի կիր (*Մեկ 26*); Ոչ առնոյր յանձն պաշտաւատար լինել դիցն երկրպագութեան (*Ագ 30*); Զիշխե յակն անկանել թագաւորին (*Ա Թոռ 274*):

Ի + հայցական = գործիականի իմաստ: *Օրինակ՝* Յահ եւ յերկիւղ քո յղացաք (*Ագ 321*); Ի բազուկ բարձր եհան գնոսա անտի (*Գծ ԺԳ 17*): Ի ձեռն «միջոցով, ձեռքով»; Ի բերան «միջոցով, բերանով»; Ի ձայն փողոյ յառաջ մատուցանէր (*Ագ 29*): *Հայցական հոլովի՝ արդի ընկալմամբ իբրեւ գործիական կիրառութեան մի մասն է: Սոյն խնդրին հանգամանօրէն անդրադարձել է Լ. Տէր-Պետրոսեանն իր դոկտորական ատենախօսութեան մէջ (տակաւին անտիպ), որում քննութեան առնելով 5-րդ դարի առաջին երեսնամեակի հայ թարգմանական գրականութիւնը՝ ի թիւս հարիւրաւոր այլ ասորաբանութիւնների ցոյց է տալիս նաեւ ի ձեռն, ի բերան, ի պատճառ(ս) եւ այսօրինակ բառակապակցութիւնների ասորաբան բնոյթը (իբրեւ ուղղակի պատճենուններ)՝ եզրայանգումները հաստատելով անխոցելի վիճակագրական հաշուումներով⁸²: Զարմանալի էլ ուրեմն, որ այս արտայայտչաձեւը, լինելով իմաստի տեսանկիւնից այն աստիճանի հասկանալի,*

82 **Тер-Петросян Л. А.,** *Сиро-армянские литературные связи в IV-V вв.* – Материалы защиты докторской диссертации, Санкт-Петербург-Ереван, 2015, էջ 55-56:

որ մերուեղ է նաեւ հին հայերէնին՝ դառնալով «հայկաբան» գրաբարի ոճական հնարներից մեկը, այնուամենայնիւ՝ մեկուսի է եւ քերականորէն չի կարող մեկնաբանուել ո՛չ ի նախդրով, ո՛չ հայցական հոլովով ձեւաւորուող իմաստային դաշտերում՝ զետեղուած մնալով աւանդաբար «ոճեր» կոչուող ընդհանրական խորագրի ներքո՝ անջատ եւ ուրոյն: Ի դէպ է ասել նաեւ, որ «ոճերի» նկատմամբ պէտք է առանձնակի ուշադիր լինել, քանի որ դրանցում շատ են օտար պատճենումները:

Ի + հայցական = կազմում է զանազան մակբայներ եւ նախադրութիւններ՝ պահպանելով Աերկացական իմաստը:

Ինչպէս տեսնում ենք, նշուած բոլոր դէպքերում ի նախդիրը պահպանում է ներկացականութեան իմաստը: Ածանցեալ նշանակութիւն ձեռք է բերում իբրեւ ուղեւորման (որից եւ՝ նպատակի) պարագայ, որպիսի կիրառութիւն իմաստի քերականացմամբ ձեռք է բերել նաեւ առ նախդիրը:

Յ Ասխորի

Հայցական հոլովի հետ ց նախդիրը կերտում է հետեւեալ իմաստները՝

Յ «մինչեւ» + հայցական: Օրինակ՝ Յայն վայր կայր արքայութիւն Արա (Բ Թոռ 545), Չոր ինչ ցայս ժամ արարի (ԵԳ 20.25):

Յ «մինչեւ» + հայցական: Կիրառում է միայն ասեմ, խնդրեմ, տամ, մատուցանեմ, հարցանեմ բայերի հետ՝ տրականի փոխարէն: Յոյց է տալիս, որ ուղեւորման տեղի պարագայի մասնաւոր դէպք է: Արտայայտում է մի բանի ընդհուպ մօտենալու, հպուելու իմաստ (անգլ. all the way to, as far as): Կիրառում է յատկապէս մինչեւ նախադրութեան հետ, որն առանձին կարող է առնել նաեւ ի նախդիր. այդ դէպքում թերեւս նոյնպէս կարելի է ենթադրել նրբիմաստային տարբերութիւն:

Ինչպէս վերը նշել ենք, ց նախդրի իմաստի հետեւանքով է, որ ց-ին հանդիպում ենք միայն ուղեւորման հայցականի խնդրառութիւն պահանջող սակաւաթիւ բայերի կողքին: Կարելի է թէականորէն ենթադրել այս նախդրի կիրառութիւն այնպիսի դէպքերի համար, երբ անհրաժեշտ կը լինէր շեշտել որեւէ առարկայի մակերեսից զատուելու, ելնելու փաստը, սակայն դրա վերաբերեալ տուեալները չափազանց սուղ են եւ վերաբերում են ետին դարերին⁸³:

Դառնանք վերջապէս ընդ նախդրին, քանի որ այս հարցում կան կարեւոր դիտարկումներ, որոնք նոր լոյս են սփռում նախդրի իմաստային յստակեցման վրայ:

Ընդ Ասխորի

Հայցական հոլովի հետ ընդ նախդիրը կերտում է հետեւեալ իմաստները՝

Ընդ+հայցական = բայական յատուկ անուղղակի խնդիր: Մինասեանը բնորոշում է իբրեւ «բայական անդասելի յատուկ խնդիրներ՝ յաճախ գործիականի համագոր, կամ ընդ նշ. վրայ»: Օրինակ՝ Չարմասցին ընդ Աս թշնամիքն ձեր (ՂԵԼ ԻԶ 32); Մերձատրք ընդ տեսիլն ուրախացին (ԶԵ 115), Նախանձէիս ընդ Մորթթեի (Եսթ Բ 20); Ընդ այն ես առաւել ցասեալ արքայ (Ա Թոռ 424): Հ. Պ. Գոճանեանն այսօրինակ կիրառութիւնները մեկնաբանում է հետեւեալ կերպ. «հեռաւոր, ոչ-ֆիզիկական կապ արտայայտող բայերի հետ, ինչպէս՝ հայել, Այլել, պշնուլ, թքանել եւն»⁸⁴, համարելով մտաւոր գործողութիւն, զգացում կամ վարմունք արտայայտող գործածութիւն: Կազմում է նաեւ դարձուածքներ՝ ընդ գուր, ընդ վայր, ընդ երկար եւ այլն: Ի

83 Մանուկեան Գ., Նախդիրների գործածությունը միջին հայերէնում,- Հանդէս ամսօրեայ, 1-12, 2004, էջ 124:
 84 Հ. Պոլոս Գոճանեան, Դասական գրաբարի գործնական քերականություն, էջ 219:

դէպ, դէմ ընդ դէմ, մերձ ընդ մերձ դարձուածքները կարծես յուշում են, որ ընդ նախդրի հետ իմաստը աւելի կարեւոր է, քան դէմ իմաստը:

Ընդ + հայցական գոյական = ժամանակի պարագայ: Օրինակ՝ Ընդ այգն, ընդ առաւառն ետ ածել գերանելին յատեանն (Բ Վկ 552); Ընդ սակաւ առուրս եկին, բերին գայն ինչ (Բգ 141); Ընդ այն ժամանակս հնձեալ էին գանդս (Յդթ ԺԱ 9); Դարձաւ առ նա աղանին ընդ երեկս (Մն Ը 11) եւ այլն: Ինչպէս արդէն քննարկուել է գործիական հոլովի հետ առ նախդրի իմաստները քննելիս, սա միեւնոյն տեղի պարագան է, որի ժամանակային իմաստը բխում է ժամանականիշ բառերի գործածութիւնից: Անորոշ դերբայի հետ կազմում է «ի՞նչ անելիս»՝ Ջհերսն փետեր, ճչէր ընդ կոծելն (Բգ 130), եւ «ի՞նչի՞ց յետոյ»՝ Ընդ վերանալ ի ջրոցն ետես ցելեալ գերկինս (Մկ Ա 10) իմաստները: Այս կէտում հարկ ենք համարում անդրադառնալ նուրբ մի հանգամանքի եւս: Հայոց լեզուի յետագայ զարգացման հետագծին հետեւելով՝ այս կառոյցներում կարող ենք փորձել զանազանել վերոսահմանեալ ընթերակացական եւ ներկացական իմաստները. այսպէս՝ ընդ կոծելն եւ ի կոծելն կառոյցները կարելի է արեւելահայերէնով ներկայացնել համապատասխանաբար՝ «կոծելու հետ» («կոծելուն համընթաց») եւ «կոծելու ժամանակ» («կոծելու ընթացքում») կառոյցներով, որոնք գրեթէ միեւնոյն՝ «կոծելիս» միտքն արտայայտելով հանդերձ՝ որոշակիորէն տարբերում են իրենց տրամաբանութեամբ եւ նրբիմաստով, որոնց ակունքները, թերեւս, գալիս են դեռեւս բուն իսկ գրաբարում այս ձեւերի միաժամանակեայ ե՛լ զանազանութիւնից, ե՛լ փոխգործածութիւնից:

Ընդ «դէմ» + հայցական = հակադրութեան խնդիր: Օրինակ՝ Գիտաց, զի՛նչ արար ընդ նա որդին իւր կրտսեր (Մն Թ 24); Մի կոռիցի ընդ Դաւիթ (Մեկ 179.582):

Քննարկուել է կացական հոլովի առնչութեամբ: Կրկին՝ ածանցեալ է «հետ» իմաստից, մտածողութեան տեսանկիւնից գրեթէ նոյնանում է դրան, ինչպէս ստորեւ՝

Ընդ «հետ» + հայցական = միասնութեան խնդիր: Քննարկուել է կացական հոլովի առնչութեամբ: Նաեւ՝ խառնել բայի կամ խառն ածականի անուղղակի խնդիր՝ Ընդ կեանաց դեղն գդեղ մահուն խառնելով (Բգ 132); Դեղ մահու ընդ կոտինդն խառնեալ (Ա Բգ 182):

Ընդ «միջեւ» + հայցական կրկնուած = ներգոյական տեղի պարագայ, երբ կրկնուած ընդ «միջեւ» + հայցականը շաղկապում է եւ-ով: Օրինակ՝ Վիհ մեծ է ընդ մեզ եւ ընդ ձեզ (Ղկ ԺԶ 26): Կարծում ենք՝ միջեւ իմաստը տրամաբանորէն առաջ է եկել միաժամանակ երկու առարկայի դիմաց գտնուելու հանգամանքից:

Ընդ «մէջ, վրայ» + հայցական = ներգոյական տեղի պարագայ: Եղեւ սով ընդ ամենայն երկիր (Ղկ Դ 25): Ընդ խելս նաւաց զպարանոցս կապէին (Գ Մկր Դ 8), Օհնէր եկեղեցիս ընդ ամենայն տեղիս (Ա Բգ 180): «Հետ» իմաստը թէեւ զգացում է, սակայն մթազնած է: Այս դէպքում աւելի շատ երեւան է բերում ի նախդրի ներկացական նշանակութիւն, ինչը նորութիւն է ընդ նախդրի գործածութեան դաշտում՝ լինելով առաջին լուրջ շեղումը ընդհանուր ընթերակացութեան յատկանշից: Հարցը բերում է ուշադրաւ մի եզրայանգման, որը տե՛ս ստորեւ:

Ընդ «երկայնքով, միջով» հայցական = «բացառական»/գործիական տեղի պարագայ: Նախորդ դէպքի իմաստային զարգացումն է: Բացառականով արտայայտում է միայն արդի հայերէնում: Օրինակ՝ Ընդ գաղտնի դուռն ... ի բերդն մտանէին (Ա Բգ 145): Յանձնարարելի է գործիականով թարգմանութիւնը:

Ընդ + հայցական = ուղեւորման տեղի պարագայ: Նախորդ դէպքի իմաստային զարգացումն է: Օրինակ՝ Ինքն ընդ անկո-

դիմ մտեալ՝ խնդրէր գարսն (Ա Բզ 132); Որ ընդ վերն մտեալ էր (Ա Բզ 185); Զաջ լեառն ընդ գետին տանէի (Ա Բզ 143):

Կազմում է դարձուածքներ՝ ընդ գիմի մտա-
նել, ընդ խաղ արկանել, ընդ միտ ածել եւ
այլն:

Ինչպէս համոզուեցինք, ընդ նախդիրը որոշ դէպքերում պահպանում է իր ընթե-
րակացական յարաբերութեան իմաստը, սակայն որոշ դէպքերում ի յայտ է բերում ի նախդրին զուգահեռ իմաստ՝ ստանալով աւելի շատ սփուման (միայն մասամբ՝ ընթե-
րակացական) գործառոյթ: Այս իրողութիւ-
նը վաղուց նկատուած եւ նկարագրուած է գրաբարագիտութեան մէջ: Ինչպէս վերը նշել ենք, պատմահամեմատական քննու-
թիւնն ուսուցանում է, որ ընդ նախդիրը հայերէնում ունի տարածին բնոյթ եւ ծա-
գում է երկու տարբեր հիմքերից. առաջինն ունի «դէմ» նշանակութիւնը, երկրորդը՝ «տակ»: Քննարկուած օրինահասկութիւն-
ները թոյլ են տուել ենթադրել, որ «դէմ/առջեւ» իմաստը, պատմականորեն զարգանալով, վերածուել է «հետ» իմաստի եւ սկսել կիրառուել առաջինին զուգահեռ:

Ընդ նախդրի՝ «մէջ»/«միջով» իմաստի զօրացումը (որի արդիւնքում քայքայուել կամ խոչընդոտուել է ընդ + կացական կա-
ռոյցը) բացատրելու համար կարելի է առաջ քաշել մի քանի վարկած: Առաջինն այն է, որ այստեղ հնարաւոր է հնդեւրոպական նախալեզուի *h₁en-ter «միջեւ, մէջ, ներս» իմաստի մասնակի պահպանում: Այս ձեւն իր շարունակութիւնն ունի վեդ. antár «մի-
ջեւ», լատ. inter «միջեւ, շարքում», գերմ. untar/unter «միջեւ, շարքում», պարս. ændær «մէջ» բառերում: Ի դէպ է նկատել, որ ինքնին նախալեզուում *h₁en-ter եւ *n^od^h-
eri ձեւերը կարող են կապուած լինել մի-
մեանց, ինչի արդիւնքում տարբեր լեզուներում առաջ են բերել «միջեւ» եւ «տակ» ի-
մաստների նմանութիւն: Վերջին իմաստն է գուցե թէ՛ ընկած սփուման յարաբերութիւն արտայայտելու հիմքում:

Օժանդակ վարկածն այն է, որ տուեալ դէպքում մենք, հնարաւոր է, գործ ունենք պարթեւերէնի ազդեցութեան հետ, որտեղ ներգոյական կազմող մասնիկն էր andar բառը⁸⁵, որի կիրառութիւնն իբրեւ պատճե-
նում տարածուել է հայերէնում՝ կա՛մ նմա-
նաճայնութեան եւ իմաստային մերձառ-
րութեան, կա՛մ հայերէնում եղած, սակայն յետ մղուած ընդ- «մէջ» իմաստով նոյնան-
ման բառի կամ նախածանցի վերստին ակ-
տիւացման պատճառով:

Հարցի ծագումնաբանական եւ առե-
րելոյթ «հետ» իմաստի առաջացման կող-
մերը թողնելով հնդեւրոպաբաններին՝ ստորեւ փորձենք շարադրել եւս մի՛ այս անգամ նկարագրական մեկնութիւն, որը սոյն յօդուածի երկրորդ կարեւոր ար-
դիւնքն է եւ հեռուն գնացող մի շարք բա-
ցայայտումների բանալին:

Մտաբերենք, որ ի եւ առ նախդիրները համանման իմաստներով կիրառուում են թէ՛ կացական, թէ՛ հայցական հոլովների հետ, ընդ որում՝ կացականով դրանք բնորոշում են դադարի վիճակ, իսկ հայցականով՝ շարժման (ուղեւորման): Իբրեւ նախնական վարկած՝ ընդունենք, որ ընդ նախդիրը եւս ունի նմանօրինակ կիրառութիւն՝ չմոռա-
նալով նաեւ, որ հայցական հոլովի հետ դրա արտայայտած իմաստները առաւելա-
պէս խմբում են «մէջ/միջով» նշանակու-
թեան շուրջ՝ հեռու «հետ/դէմ» իմաստից: Սա անկարելի է պատահական համարել, ուստի խուսափելու համար արդէն իսկ եր-
կու տարբեր՝ «դէմ» եւ «տակ» նախածեւե-
րի կողքին «մէջ» իմաստով մեկ այլ նախա-
ձեւ որոնելուց՝ առաջարկենք հետեւեալ մեկնաբանութիւնը⁸⁶:

85 Языки мира: Иранские языки. II. Северо-
западные иранские языки (ред. Расторгуева
В.С.), Москва, 1999, էջ 17:

86 Առաւել էս, որ ոսկեդարեան իսկ շրջանում արդէն անարտադրողական դարձած նախաբա-
լերում էս առաւելապէս նկատուում է ընդ նախդ-
րի «հետ», այլ ոչ՝ «մէջ» իմաստը, ինչպէս ունենք

Հայցականի հետ կիրառութեան առաջին օրինակում նշուած է, որ այսպիսի կիրառութիւնները մեկնաբանելի են իբրեւ մտաւոր գործողութիւն, զգացում կամ վարմունք, որոնց բայերն արտայայտում են հեռաւոր եւ ոչ-ֆիզիկական կապ: Երկարամեայ մտածումները մեզ բերել են այն համոզմանը, որ ընդ նախդիրը տուեալ իմաստով արտայայտում է ոչ թէ սոսկ մտաւոր գործողութիւն, զգացում կամ վարմունք, այլ առհասարակ գործողութիւն, որը չի կտրոււմ գործող անձից կամ դրա առարկայից, չի ելնում գործող անձի եւ գործողութեան վայրի համընդհանուր սահմաններից եւ ուր ուրեք սկիզբ առնելով՝ աւարտում է միեւնոյն սահմաններից ներս, ի տարբերութիւն ի նախդրի, որի գործողութեան տիրոյթը կարող է տեղափոխվել⁸⁷:

Այս վարկածն իբրեւ մեկնակէտ ընդունելով՝ կարող ենք ապա տեսնել, որ թերեւս սա է պատճառը, որ մտաւոր, հոգեւոր եւ ոչ-ֆիզիկական գործողութիւններն ըստ մեծի մասի պահանջում են ընդ նախդիր, քանի որ սկզբնաւորում եւ աւարտում են տուեալ անձի ներսում: Սրանից անմիջապէս բխելի է հինգերորդ կէտում բերուած՝ իբրեւ «ներգոյական տեղի պարագայ» կիրառութեան դէպքերի բացատրութիւնը: Ընդ ամենայն երկիրն Հայոց ի ծագաց մինչեւ ի ծագս ձգտէր տարածանէր զմշակութիւն քարոզութեանն (Ագ, ձԻ, 8) օրինակից յստակօրէն տեսնում ենք, որ տարածանել գործողութեան սկիզբը եւ աւարտը միեւնոյն երկրում է, ուստի գործածուել է ընդ նախդիրը, այնինչ ի ծագաց մինչեւ ի ծագս արտայայ-

տութիւնն ունի ի նախդիրը, քանի որ մի ծագը գործողութեան վայրի առմամբ տարբեր է միւս ծագից: Նոյնաբար ունենք շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն գալիլեացոց⁸⁸ (Մթ Դ 23) կամ ասէ ընդ միտս կամ քարոզի ... ոչ միայն ընդ արեւմուտս, այլ եւ ընդ արեւելս, այլ եւ ընդ հիւսիս եւ ընդ հարաւ (Եղ 134), կամ ընդ արեւելս ընթանան կամ ընդ արեւմուտս արշաւեն օրինակները, որոնցից պարզորոշ երեւում է, որ քարոզելիս, շրջելիս, մտքում խօսելիս կամ աշխարհի չորս կողմ սփռուելիս եւ արշաւելիս գործողը մնում է գործողութեան վայրի սահմաններից ներս, ընդ որում՝ վերջին դէպքում այդ վայրը չափազանց լայն է՝ հարաւն ու հիւսիսը, արեւելքն ու արեւմուտքը ընդարձակ կողմեր են, այլ ոչ՝ գործողութեան շրջանակից դուրս ընկած նպատակակէտեր: Լավ օրինակ է նաեւ Նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշորի, քան ընդ տերութիւն իրեանց ազգատոհմին (Ագ., 20), որից յստակօրէն տեսնում ենք, որ օտար տէրութեան մէջ նուաճուելիս գործողութիւնը ելնում է տուեալ երկրի շրջանակներից, իսկ սեփական ազգատոհմի դէպքում՝ ոչ: Սրա իմաստային զարգացումն է, ահա, ընդ նախդրի՝ «երկայնքով, միջով» կիրառութիւնը, քանի որ եթէ բայը շարժում է ցոյց տալիս, իսկ գործողը շարժուելիս չի լքում պարագայի սահմանները, ապա, միանգամայն տրամաբանօրէն, պիտի ընթանայ միայն դրա միջով կամ երկայնքով: Նոյնաբար բացատրելի են դառնում նաեւ բազում դարձուածքները, ինչպէս՝ ընդ գինի մտանել, ընդ խաղ արկանել, ընդ միտ ածել, ընդ աղէղ մտանել, առնել ընդ ոտս եւ այլն, երբ գործողութիւնը կա՛մ տեղի է ունենում գործողի ներսում, կա՛մ գործողն ու առարկան միասին հանդէս են գալիս իբրեւ մեկ անբաժան համակարգ, կա՛մ գործողը գործում է առարկայի ներսում: Նոյնն է եւ

ընդունիմ, ընդարձակեմ եւ այլ հնագոյն բայերում: Տե՛ս Անտուան Մեյլե, նշ. աշխ., էջ 143-146, 385-392:

87 Այս մեկնաբանութիւնը, ի դէպ, չի հակասում վերոբերեալ վարկածին (եթէ այն ապացուցելի է պատմահամեմատական քննութեամբ), ըստ որի՝ հայերէնում սոյն նախդիրը կարող է ծագած լինել նաեւ «մէջ» նշանակութեամբ որեւէ նախածիւց, սակայն քիչ աւելի դժուար է դարձնում «հետ» իմաստի առաջացումը:

88 Այսինքն, կարելի է երթալ յերկիրն գալիլեացոց, սակայն դրանում լինելիս արդէն կարելի է միայն շրջել ընդ երկիրն:

բազմիցս նկատուած սփռման յարաբերութիւնը, որը, ինչպէս գիտենք, պահանջուած է ընդ նախդիրը, քանի որ մնում է գործողութեան միջավայրի տարածական կամ վերացական սահմաններից ներս: Իմաստային դաշտի ընդլայնմամբ՝ սրա ուղղակի զարգացումն է նաեւ միջոցի առմամբ ընդ նախդրի գործածութիւնը (որ ընդ ունկն ոչ լսէ, ընդ մկանունս լսել տան անս):

Ըստ ամենայնի, սրանով պէտք է բացատրել, որ ընդ նախդիրը կիրառուած է ի նախդրի ներկացական իմաստի հետ փոխնիփոխ, երբ շատ դէպքերում դրանց «ներշնչանակային» իմաստները մերձ են եւ խօսողի անհատական մեկնաբանութեան ենթակայ: Այնինչ, տարբերութիւններ եւ նրբերանգներ գոյութիւն ունեն՝ եւ չեն կարող չունենալ, քանի որ տարբեր են թէ՛ նախդիրները, թէ՛ դրանց իմաստային բուն դաշտերը: Իրադրութիւնը նոյնն է, ինչ առ եւ ի նախդիրների ազդեցութեան ոլորտների վերածածկման պարագայում եւ այնտեղ, ուր արժէ շեշտել դրանց տարբերութիւնը, գործածուած են «չնշութաւորուած» ի նախդրից տարբեր նախդիրներ: Ուստի, սխալ կամ զարմանալի չեն ընդ տկարութեան, առ ի տկարութեան, ի տկարութեան, ըստ տկարութեան եւ այլ զուգահեռ կառոյցները, քանի որ իմաստային շրջանակներն այդ կիրառութիւններում այնքան մօտ են միմեանց, որ դրանց զանազանութիւնը զուտ հեղինակային որոշման խնդիր է: Սոյնիւ կարելի է բացատրել նաեւ բացառականի հետ այս նախդրի կիրառութեան ուրոյն դէպքերը, որոնք, գիտենք, չափազանց սահմանափակ են՝ ընդ աջմէ, ընդ հիւսիսոյ կողմանէ եւ նմաններ՝ ամփոփուելով միեւնոյն տրամաբանութեան շրջանակներում: Հնարաւոր է, որ ժամանակին այս արտայայտչաձեւերը կիրառութեան շատ աւելի լայն ասպարէզ են ունեցել, սակայն ի նախդրի յաճախադիպութեան աճն ու համաբանական ազդեցութիւնը թերեւս նեղացրել են այսօրինակ գործառոյթները՝

թողնելով միայն նրանք, որոնք ամենից շատ էին կիրառուած եւ, ուստի, յիշուած բանաւոր խօսքում՝ նախքան դասական շրջանում արձանագրուելը:

Այժմ գանք միւս կարեւոր կէտին, այն է՝ շարժման եւ դադարի վիճակների զանազանութեանը: Առաջարկվող երկրորդ վարկածով կը պնդենք, որ ընդ +կացական (եզակիւում՝ տրականի քայքայուած) եւ ընդ +հայցական կառոյցները ընդ նախդրին յատուկ նշանակութեան սահմաններում ունեն նաեւ համապատասխանաբար դադարի եւ շարժման յարաբերութիւն, ինչպէս ի եւ առ նախդիրները՝ կարեւոր մի տարբերութեամբ, այն է՝ ի եւ առ նախդիրների պարագայում շարժման եւ դադարի հանգամանքները բխում են բայիմաստից, իսկ ընդ նախդրի դէպքում միեւնոյն բայի գործողութեան ընթացքում եթէ գործողն անբաժան է մնում ընդ նախդրի խնդրից, ապա գործածուած է ընդ + կացական (եզակիւում՝ տրական) կառոյցը, իսկ եթէ գործողութիւնը տեղի է ունենում ընդ նախդրի խնդրի եզրագծից ներս՝ ընդ+հայցական կառոյցը: Այլ կերպ՝ եթէ ենթական գործողութեան ընթացքում նախդրաւոր անդամի նկատմամբ անշարժ է, ապա, զուտ տրամաբանօրէն, ենթական այդ խնդրի «հետ» է միշտ, նոյնն է թէ՛ խնդրի նկատմամբ դադարի վիճակում, իսկ եթէ ենթական նախդրի խնդրի նկատմամբ շարժուած է, մնալով սակայն տուեալ խնդրի ֆիզիկական, ժամանակային կամ երեւակայական սահմաններից ներս, այն է թէ՛ կրկին այդ խնդրի «հետ» իբրեւ անխզելի ամբողջութիւն՝ լայն շրջանակում, ապա ենթական նախդրի խնդրի «մէջ» է, «միջով», «միջոցով», «վրայով» (փոխաբերաբար) եւ այլն՝ չլքելով հանդերձ խնդրի տարածքը, այսինքն՝ միշտ մնալով դրա «հետ», ներքուստ՝ յարաբերական շարժման վիճակում, արտաքուստ՝ չլքելով: Ահա այս շարքում «մէջ» իմաստի զարգացումն է, որ մերձենում է ի նախդրի կիրառութիւն-

ներին՝ յարուցելով խառնաշփոթ կամ իմաստային փոխներթափանցում՝ թուացնելով թէ ոչ: Նոյն այս կիրառութիւնն է, թերեւս, պատճառ դարձել, որ ընդ + կացական կառուցքը կա՛մ չձեւաւորվի, կա՛մ երբեւէ ձեւաւորուած լինելով՝ քայքայուի եւ վերածուի ընդ + եզակի տրական եւ ընդ + յոգնակի հայցական կառուցքի:

Նկատելի է նաեւ, որ նոյն այս պատճառով է ժամանականիշ գոյականների դէպքում տեւականութիւն արտայայտելու համար գործածուած ընդ+հայցական կառուցքը (ընդ այգն, ընդ առաւաւտն եւ այլն, երբ ի նախդրի դէպքում սպասելի է կացականը), քանի որ գործողութիւնը ընթանում է դրանցով սահմանված ժամանակի միջով:

Այսպիսին է մեզ պատկերանում «հետ» նշանակող ընդ նախդրի իմաստային դաշտի ընդլայնումը, զարգացումը, տարբերակումը եւ այս ամէնի թուացնելու ճեղքման լուծումը: Եթէ ոչ ծագումնաբանօրէն, ապա գոնէ նախդիրների կիրառութեան ու-

սուցանման իմաստով, կարծում ենք, սա կարող է միանգամայն օգտակար լինել:

Եզրակացութիւն

Այսպիսով՝ մեր ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ դասական հայերէնի կարեւորագոյն առանձնայատկութիւններից մեկը՝ նախդիրների լայն գործածութիւնը զանազան հոլովների հետ, հակառակ ծաւալային ծանրաբեռնութեանը, ընդհանուր բազմազանութեանը, թուացնելու բազմիմաստութեանը, գրչագրական վրիպակներին եւ անորոշութիւններին, փոխադարձ իմաստային ներթափանցումներին եւ որոշ դէպքերում նոյնիսկ նրբերանգային տարբերակութեան մերօրեայ ընկալումների աղօտութեանը, ուրուագծում է նախդիրներով կառավարող հոլովածեւերի հետ միանգամայն կայուն եւ յստակ հասկացական յարաբերութիւններ:

Նախդիրների կիրառութեան նոր աղիւսակը, ըստ այդմ, ձեռք է բերում հետեւեալ տեսքը.

Նախդիր	Հոլով					
	հայցական	սեռական	տրական	կացական	բացառական	գործիական
առ	+			+	+	+
զ-	+			+	+	+
ընդ	+	+	+	(եզ.) ← (+ (յգ.))	+	+
ըստ	+		+	(+)	+	
ի (յ-)	+			+	+	
ց-	+					

Ի մի բերելով, մէկ առ մէկ քննելով, համակարգելով եւ ընդհանրացնելով բոլոր հոլովների հետ նախդիրների գործածութեան դէպքերը եւ իւրայատկութիւնները՝ փորձել ենք ձեւակերպել սպասարկու այս բառերի արտայայտած հասկացական-տրամաբանական յարաբերութիւնների համակարգը դասական հայերէնում, մշակել ենք գրաբարեան նախդիրների մեկնա-

բանութեան սխեմայ եւ առաջարկել դրանց իմաստային կողմի ներկայացման նոր հայեցակէտ, որը սահմանում ենք հետեւեալ կերպ՝

Առ նախդիր՝ մերձկացութիւն, Զ նախդիր՝ մասնատրութիւն (քերականացմամբ՝ որոշեալութիւն), Ընդ նախդիր՝ ընթերակացութիւն, Ըստ նախդիր՝ անդրկացութիւն, Ի

նախդիր՝ Աերկացութիւն, Յ նախդիր՝ միւնչկացութիւն:

Այսպիսի ընդհանրացումը թոյլ է տալիս ոչ միայն աւելի պարզորոշ եւ դիւրին ներկայացնել նախդիրների գործածութեան սկզբունքային կողմերը յետագայ ուսումնասիրութիւններում եւ գրաբարի ձեռնարկներում, այլեւ ձեւաւորել ոսկեդարեան գրաբարի լեզուամտածողութեան առաւել հարագատ ընկալում:

Ըստ այդմ՝ մեր աշխատանքը պարզորոշ ցոյց է տալիս, որ նախդիրները, քերականական իմաստից զատ, գրաբարում օտտուած են նաեւ բառային իմաստով, որը եւ պայմանաւորում է այս կամ այն հոլովի հետ նախդրաւոր կապակցութեան հաղորդած նշանակութիւնը, իսկ նախդիրների քերականական իմաստը հետեւանք է դրանց բառային իմաստի քերականացման:

Ուսումնասիրութեան արդիւնքում պարզ է դարձել, որ խնդրային եւ պարագայական լրացում դարձող բառակապակցութիւնների ձեռք բերած նշանակութիւնը շատ դէպքերում բայական, այլ ոչ՝ նախդրի խնդիր գոյականի կամ դերանունան իմաստի հետեւանքն է, եւ դեկավարում է շարահիւսութեան թելադրանքով: Այս դիտարկումը թոյլ է տալիս նախդիրների գործածութեան մի շարք առանձին կողմեր որոշակիորէն զատել ձեւաբանութեան համատեքստում դրանց ներկայացման աւանդական ձեւից՝ ներառելով շարահիւսութեան մէջ:

Հետազօտութիւնը թոյլ է տալիս նկատել, որ նախդիրներով ձեւաւորուող յարաբերութիւնները մեծաւ մասամբ բխում են նախդրառու անդամի հոլովին ներյատուկ իմաստներից եւ առանձնապէս չեն փոխում տուեալ հոլովի նախնական նշանակութիւնը՝ դէպքերի մի ստուար մասում կատարելով նախդրի բառիմաստից բխող անհրաժեշտ նրբերանգի հաղորդման գործառոյթ:

Աշխատանքի արդիւնքներից մեկը պէտք է համարել գրաբարում ներգոյականի փոխարէն կացական հոլովի՝ որպէս նախդիրների գործածութեան համար կարելոր նշանակութեան կաղապարի սահմանումը, ինչը փորձել ենք հիմնաւորել՝ համաժամանակեայ կտրուածքում նախդիրների գործածութեան փաստերի վերհանմամբ եւ վերամեկնաբանմամբ:

Աշխատանքում առաջ է քաշուում ընդ նախդրի իմաստի միանգամայն նոր մեկնաբանութիւն, ինչպէս նաեւ ի եւ ընդ նախդիրների փոխադարձ գործածութեան պատճառների մեկնաբանութեան երկու վարկած:

Կատարուած հետազօտութեան սկզբունքները եւ արդիւնքները կարող են հիմք դառնալ դասական հայերէնի քերականութեանը նուիրուած նոր ուսումնասիրութիւնների համար եւ սխեմատիկ պատկերների ուղեկցութեամբ կիրառուել կրթական ասպարէզում գրաբարեան նախդիրների ընկալումը դիւրացնելու նպատակով: